

ՃԱՏՖԱՐԻ. «ԱՆՀՐԱԺԵՆՏ Ե ՎԵՐԳ ՏԱԼ ՍՈՒՐԻՈՅ ՎՐԱՅ ԲԱՆԵՅՈՒԱԾ ՏԵՏԵՍԱԿԱՆ ՊԱՏՃԱՄԻՉՈՅՆԵՐՈՒՆ»

Զորեքշաբթի, 20 Մայիս 2020-ին Սամա պատկերասփիւռային կայանը հաղորդեց, որ ՄԱԿ-ի մէջ Սուրիոյ մնայուն բանագնաց դոկտ. Պաշար ալ Ճաաֆարի Սուրիոյ մէջ մարդկային իրավիճակին շուրջ տեղի ունեցած ՄԱԿ-ի Ապահովութեան Խորհուրդի առցանց նիստին յայտնած է, որ արեւմտեան պետութիւններուն կողմէ Սուրիոյ վրայ բանեցուած տնտեսական, առեւտրական, նիւթական եւ առողջապահական պատժամիջոցները պետք է դադարեցնել, յայտնելով, որ մարդկային իրավիճակի բարելաւումը Սուրիոյ պետութեան հետ գործակցութեամբ կրնայ իրականանալ, ուստի պետք է մարդկային օժանդակութեան տրամադրումը քաղաքականացնել:



Ապա յայտնած է, որ Սուրիա եզակի նախաձեռնութիւններով եւ ՄԱԿ-ի անդամ պետութիւններուն հետ գործակցաբար տեղեկացուցած է ՄԱԿ-ի քարտուղարին եւ Ապահովութեան Խորհուրդի իրարայջորդ նախագահներուն, որ անհրաժեշտ է անդամ պետութիւններուն կողմէ Սուրիոյ վրայ բանեցուած պատժամիջոցները վերացնել: Ան հաստատած է, որ այս ուղղութեամբ սուրիական կողմէն առաջուած գրաւոր պահանջները ընդունուած են ՄԱԿ-ի քարտուղարին եւ կազմակերպութեան պատասխանատու մարմիններուն կողմէ, ինչպէս Սուրիոյ մէջ ՄԱԿ-ի բանագնաց Կիր Պետրոսըն, Համաշխարհային Առողջապահութեան Կազմակերպութեան եւ ԼԵԼԻ քան 40 միջազգային կազմակերպութեան կողմէ, որոնք բոլորը շեշտած են Սուրիոյ վրայ բանեցուած պատժամիջոցներուն վերջ տալու անհրաժեշտութիւնը:

Ճաաֆարի նիստին ընթացքին ըսած է, որ թրջական կողմը կը շարունակէ խախտել միջազգային օրէնքներն ու համաձայնութիւնները, Տիգրիս գետի ափին կառուցած է «Էլիս» գետը, որուն պատճառով միլիոնաւոր սուրիացի եւ իրաքցի քաղաքացիներ տարիներ շարունակ պիտի գրկուին Տիգրիսի ջուրէն: Ան յայտնած է նաեւ, որ Թուրքիա կը շարունակէ նաեւ ջուրի անջատումը որպէս զենք օգտագործել Հասիէի քաղաքացիներուն սպառնալու համար, ան կ'անջատէ Ալլուք քրակայանը եւ շուրջ մէկ միլիոն սուրիացի ջուրէ կը գրկէ: Սոյն արարքով, Թուրքիա ոճիր կը գործէ մարդկութեան դէմ: Այս երեւոյթը Ապահովութեան Խորհուրդէն արտակարգ ժողովներ կը պահանջէ՝ վերջ դնելու նման արարքներու եւ հարցաքննութեան ենթարկելու թրջական իշխանութիւնները՝ յարմար պատժական տնօրինումներ սահմանելով անոր:

Ճաաֆարի եզրակացնելով ըսաւ, որ թրջական ուժեր Սուրիոյ հիւսիսարեւելեան շրջաններուն մէջ Սուրիական Կարմիր Մահիկին աշխատանքը խոչընդոտեցին եւ անոր փոխարէն թոյլ տուին որ ապօրինի խմբաւորումներ մուտք գործեն Սուրիոյ հիւսիսային եւ հիւսիսարեւմտեան շրջաններ, արգիլեցին Կարմիր Մահիկին մուտքը, ինչպէս նաեւ յարձակում գործեցին Կարմիր Մահիկի կեդրոնին վրայ, այնպէս ինչպէս Իսրայէլ կը գործէ 1967-ին սուրիական Կոլան քաղաքը գրաւելէն ի վեր: Այսպիսով Թուրքիան համահասարակ կը դառնայ Իսրայէլի՝ Կարմիր Մահիկին եւ Օգնութեան Խաչի կազմակերպութիւններու աշխատանքին արգելք հանդիսանալով:

ՆԱԽԱՎԱԶ ՍԱՐԳՍԵԱՆ ՀԱՆԴԻՊԱԾ Ե ԻՇԽԱՆ ՍԱՐԳՍԵԱՆԻ ԵՒ ԱՐՍԷՆ ՀԱՄԲԱՐՉՈՒՄԵԱՆԻ ՀԵՏ

Պսակածէ Ժահրի համավարակով յատկանշուող իրավիճակին, անոր տնտեսական հետեւանքներուն, նոր մարտահրաւերներուն յաղթահարման միջոցներու քննարկման նպատակով Հայաստանի Հանրապետութեան նախագահ Արմէն Սարգսեան հանդիպումներու շարքի մը նախաձեռնած է խորհրդարանական եւ արտախորհրդարանական ուժերու, հասարակական կազմակերպութիւններու եւ այլազան ոլորտներու մասնագետներու հետ:



Այս շրջագիծէն ներս, նախագահ Սարգսեան Չորեքշաբթի, 20 Մայիսին հանդիպում ունեցած է ՀՀԴ Հայաստանի Գերագոյն Մարմնի ներկայացուցիչ Իշխան Սարգսեանի եւ ՀՀԴ Բիւրոյի անդամ Արսէն Համբարձումեանի հետ: Հանդիպման ընթացքին անդրադարձ կատարուած է համավարակին հետեւանքով ստեղծուած իրավիճակին, տնտեսական դժուարութիւններուն, անոնց յաղթահարման կարելիութիւններուն եւ միջոցներուն:

Զրուցակիցները համակարծիք եղած են այն բանի շուրջ, որ այս մարտահրաւերը կարելի է յաղթահարել միայն ուժերու համախմբման միջոցով: ՀՀԴ ներկայացուցիչները ներկայացուցած են իրենց տեսլականը իրավիճակը յաղթահարելու կարելի միջոցներուն մասին: Մտքեր փոխանակուած են նաեւ երկրի ներքին եւ արտաքին հարցերուն շուրջ, ինչպէս նաեւ անդրադարձ կատարուած է համազգային օրակարգին առնչուող շարք մը հարցերու, որոնց կարգին Հայոց Ցեղասպանութեան 105-րդ տարելիցին, Սեւրի դաշնագրի կնքման 100-ամեակին եւ Առաջին Հանրապետութեան յառաջիկայ տարեդարձին նուիրուած ձեռնարկներու շուրջ:

Հանրապետութեան նախագահին տեղեկութիւնները ներկայացուած են ՀՀԴ-ի ծրագրած շարք մը ձեռնարկներուն մասին, որոնք, համավարակին հետեւանքով ժամանակաւորապէս յետաձգուած են: Անդրադարձ կատարուած է նաեւ նախագահ Սարգսեանի առաջարկած Համազգային այգիին՝ «հայ պարկ»-ի ստեղծման նախաձեռնութեան:

Հիւրերը ողջունելի համարած են համահայկական նշանակութիւն ունեցող այս նախաձեռնութիւնը, որ ուղղուած է ազգային միասնականութեան ապահովումին:

ՆԻՉԱՐ ԵԱՃՅԻ. «ՍՈՒՐԻՈՅ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹԵԱՆ ՀԱՏՈՒԾԸ ԻՐ ԿԱՐԵԼՈՒԹԵԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՆ ՄԵՋ ԿԸ ԴԻՄԱԳՐԱԷ ՊՍԱԿԱՉԵՒ ԺԱՅՐԻ ՀԱՄԱՃԱՐԱԿԸ»



Երեքշաբթի, 19 Մայիս 2020-ին, ՍԱՆԱ հաղորդեց, որ Սուրիոյ մասնակցութեամբ ժընեւի մէջ ընթացք առաւ Համաշխարհային Առողջապահութեան Միութեան 73-րդ համաժողովը:

Առցանց դրութեամբ տեղի ունեցած երկօրեայ համաժողովին, Սուրիոյ առողջապահութեան նախարար Նիզար Եաճի յայտնեց, որ Սուրիոյ առողջապահութեան հատուածը իր կարելիութեան սահմաններուն մէջ կը դիմագրաւէ պսակածէ Ժահրի համաճարակը՝ նկատի առնելով 9-ամեայ պատերազմին ստեղծած դժուարին պայմանները եւ Սուրիոյ վրայ բանեցուած տնտեսական պատժամիջոցները, որոնք կը խոչընդոտեն առողջապահական ծառայութիւններուն աշխատանքը:

Նախարարը ըսաւ. «Մինչ առողջապահական եւ տնտեսական կարող համակարգեր ունեցող պետութիւններ դժուարութեամբ կը դիմագրաւեն համաճարակը ԱՄՆ եւ արեւմտեան կարգ մը պետութիւններ կը շարունակեն Սուրիոյ տնտեսական պատժամիջոցներ պարտադրել, ինչ որ կը խոչընդոտէ պսակածէ Ժահրի դիմագրուման անհրաժեշտ սարքերու եւ դեղորայքի ապահովումը եւ նոյնիսկ վարակուած պարագաներու շուտափոյթ բուժումը»:

Խմբագրական

ՓՐԿԵԼ ՍՈՒՐԻՈՅ ԺՈՂՎՈՐՈՂԸ ՆԱԽԱՏԵՍՈՒՂ ԱՂԵՏԵՆ

Սուրիոյ ժողովուրդը տասը տարիէ ի վեր անկայուն կացութեան մէջ կ'ապրի շարունակուող պատերազմին հետեւանքով: Պատերազմ մը, որ երկրին տնտեսութիւնը քայքայեց, ժողովուրդը տարտղեց, անմեղ զոհեր խլեց, բնականոն կեանքը կասեցուց, անապահութիւն ստեղծեց եւ բազմակողմանի դժուարութիւններու մատնեց զայն: Այս իրավիճակին եկան աւելնալու պսակածեւ ժահիրին համաճարակն ու անոր բերումով յառաջացած առողջապահական վտանգն ու տնտեսական աննախադէպ դժուարութիւնները: Դժուարութիւններ, զորս Սուրիոյ ժողովուրդը պատերազմի ամենադաժան տարիներուն իսկ չէր ճաշակած:

Թէեւ Սուրիոյ կառավարութիւնը ամէն ջանք կը գործադրէ, իր կարելիութիւնները ճիշդ ձեւով կը գնահատէ ժողովուրդը լուսաբանելու, համաճարակի տարածումը կանխելու եւ անոր վնասները նուազագոյնի իջեցնելու համար, սակայն այս բոլորը ժողովուրդը գերծ չեն կացուցաներ արեւմուտքին կողմէ երկրին դէմ սահմանուած անմարդկային պատժամիջոցներուն վտանգներէն: Կացութիւնը լուրջ է եւ աղետալի վիճակներու կրնայ հասնիլ եթէ տնտեսական պատժամիջոցները չեղեալ չհամարուին եւ պատերազմի ծանր բեռին տակ կքած ժողովուրդին առողջապահական ու տնտեսական ապահովութեան նուազագոյն մակարդակը չպահպանուի:

Երկրին ու անոր ժողովուրդին նախագգուշական քայլերը թէեւ մասամբ նպաստեցին համաճարակի տարածման կանխումին, սակայն Սուրիոյ ժողովուրդը դէմ յանդիման կը կանգնի ահաւոր վտանգի մը: Այդ վտանգին առաջը առնելու համար անհրաժեշտ է նախ չեղեալ համարել արեւմուտքին պարտադրած տնտեսական այն պատժամիջոցները, որոնք անհրաժեշտ տնտեսական եւ առողջապահական կարիքներու ապահովումն իսկ կը դժուարացնեն: Պսակածեւ ժահիրի համաճարակին դիմագրաման համար երկիրը կարիքը ունի տնտեսական ուժի՝ ապահովելու մեկուսացման կեդրոններ, բժշկական սարքեր եւ դեղորայք, սակայն երկիրն ու այս պատժամիջոցներուն բերումով մեծապէս տուժող ժողովուրդը անել կացութեան մէջ յայտնուած են: Ժողովուրդը օրապահիկը վաստկելու մտահոգութեամբ կ'ապրի այլեւս, իսկ Սուրիոյ կառավարութիւնը տնտեսութիւնը համընդհանուր փլուզման վտանգէն գերծ պահելու համար կը մաքառի:

Այսպիսի պայմաններու մէջ, յատկապէս նկատի ունենալով Առողջապահութեան Միջազգային Կազմակերպութեան այն նախագգուշացումները, թէ Սուրիան պատերազմի տասը տարիներու իր կրած վնասներուն բերումով համաճարակի սրընթաց տարածման պարարտ հող կը հանդիսանայ, անհրաժեշտ է վերակարգաւորել միջազգային քաղաքական քարտերը եւ մարդկայնութիւնը վեր դասել քաղաքական, տնտեսական այլ նկատառումներէ: Սա միջազգային ընտանիքէն եւ Սուրիոյ բարեկամ երկիրներէն կը պահանջէ տնտեսական պատժամիջոցներու չեղարկման համար անհրաժեշտ ճիգերու գործադրումը ու համաճարակի տարածման կանխումին նպաստող մարդկային վարքագիծի դրսեւորումը, մինչեւ որ գիտնականներ յաջողին գտնել այս ժահիրին տարածումը կասեցնող համապատասխան պատուաստը:

Սուրիահայութիւնը եւս, որպէս երկրի բնակչութեան գործունէայ մէկ հատուածը, կարիքը ունի ոչ միայն նիւթական օժանդակութեան, այլեւ քաղաքական բեմերու վրայ Սուրիոյ ժողովուրդին ձայնը լսելի դարձնող գործիչներու, դիւանագետներու ներդրումին:

Մարդկային աղէտը կանխելու համար ձեռք երկարենք Սուրիոյ ժողովուրդին, սուրիահայութեան, որոնք այսպիսի պայմաններու մէջ իսկ կը շարունակեն գործել ու արարել:

«Գ.»

-Զորքէշաբթի, 20 Մայիս 2020-ին, ՍԱՆԱ հաղորդեց, որ Զալէպի հիւսիսային Աֆրին քաղաքին մէջ թրքական ուժերուն ենթակայ գինեալ ահաբեկչական խմբաւորումներու միջեւ տեղի ունեցած բախումներուն հետեւանքով քաղաքացի մը զոհուած է, երկու ուրիշներ վիրաւորուած են:



Յիշենք, որ վերջին քանի մը շաբաթներուն ընթացքին, Զասիչէի, Ռաքքայի եւ Զալէպի արուարձաններուն մէջ կայք հաստատած թրքական ուժերուն ենթակայ գինեալ ահաբեկչական խմբաւորումներուն միջեւ բախումներ տեղի ունեցան, որոնց հետեւանքով նշեալ խմբաւորումները բազմաթիւ կորուստներ ունեցան:

-Սուրիոյ մէջ մարդասիրական առաքելութիւն իրականացնող Զայաստանի Զանրապետութեան բժշկական խումբը Զալէպի Զայաստանի Գլխաւոր Զիւլպատոսութեան հետ գործակցութեամբ կը շարունակէ Զալէպի գինուորական հիւանդանոցին եւ այլ բուժ-հաստատութիւններուն բժշկական եւ այլ անհրաժեշտ գոյք եւ դեղորայք տրամադրել:



«Մարդասիրական Ականազերծման եւ Փորձագիտական Կեդրոն» ՊՈԱԿ-էն, բժշկական կեդրոններու ղեկավարները հայ մասնագետներուն իրենց երախտագիտութիւնը յայտնած են, տրամադրուած անհրաժեշտ գոյքին, դեղորայքին եւ բժշկական հաստատութիւններէն ներս ամէն օր ցուցաբերուող օժանդակութեան համար:

Զալէպի գինուորական հիւանդանոցի պետ, գորավար Ֆայեգ ալ Այուպի բարձր գնահատած է հայ եւ սուրիացի բժիշկներուն միատեղ ջանքերը, աշխատանքի հանդէպ սուրիումը եւ Զայաստանի մարդասիրական խումբին մշտական աջակցութեան համար շնորհակալութիւն յայտնած է:

-Երկուշաբթի, 18 Մայիս 2020-ին, Սուրիոյ Առողջապահութեան Նախարարութիւնը հաղորդագրութեամբ մը յայտնեց, որ նախարարութեան պատկառող խորհուրդը որոշեց Դամասկոսի արուարձանին մէջ գտնուող Սէյիտա Չէյնապ շրջանի առողջապահական մեկուսացումը չեղեալ համարել, շրջանի բնակիչները քննութեան ենթարկելէ ետք:



Նախարարութիւնը հաստատեց, որ 2 Մայիս 2020-էն ի մինչեւ օրս պսակածեւ ժահիրով վարակուած ոչ մէկ պարագայ արձանագրուած է տուեալ շրջանին մէջ:

Յիշենք, որ նախորդ 2 Ապրիլ 2020-էն, սուրիական կառավարութիւնը որոշում առած էր Սէյիտա Չէյնապ շրջանը ամբողջութեամբ առողջապահական մեկուսացման ենթարկել, նկատի ունենալով, որ Սուրիոյ մէջ պսակածեւ ժահիրով վարակուած պարագաներու մեծամասնութիւնը այնտեղ կը գտնուէր:

- Կիրակի, 17 Մայիս 2020-ին, Սուրիոյ Առողջապահութեան Նախարարութիւնը յայտարարեց, որ պսակածեւ ժահիրով վարակուած 7 պարագաներ եւս արձանագրուեցան:

Մահացած	Բուժուած	Վարակուած
03	36	58

Այսպիսով Սուրիոյ մէջ պսակածեւ ժահիրով վարակուածներուն թիւը հասաւ 58-ի, մահացածներունը մնաց 3, բուժուածներունը՝ 36:

Լուրեր Հայաշխարհին

ՀՀ ԳՆԱՏԱՍԱՆԻ ԳԵՐԱԳՈՅՆ ՄԱՐՄԻՆԸ ՀԱՍՏԱՎԱՐԱԿԻՆ ՀԱԿԱՉԳԵՆՈՒ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ ԻՐ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ ՏՈՒՄ Ե

Հայ Յեղափոխական Դաշնակցության Հայաստանի Գերագոյն



Մարմինը, վերլուծելով պատկանելի ժառանգության հիմնական կառավարության գործողությունները, հրապարակած է վերլուծական-ուսումնասիրական յայտարարություն մը, որուն մէջ կ'արձանագրէ, թէ հակառակ Դեկտեմբեր 2019-ին պատկանելի ժառանգության մասին շինաստանի պաշտոնական յայտարարության, իսկ այնուհետեւ բազմաթիւ պետություններու եւ Առողջապահության Համաշխարհային Կազմակերպության կողմէ վարակի վտանգ առողջության առնչուող ահազանգերուն՝ Հայաստանի կառավարությունը անկուրջ մօտեցում ցուցաբերած է վարակին նկատմամբ: ՀՀ Դաշնակցության Հայաստանի Գերագոյն Մարմինը հաստատած է նաեւ, որ Մարմինը, ինչպէս նաեւ անհատ քաղաքական գործիչներ, մասնագետներ, հանրային գանձանքներու համար հանդէս եկած են իրավիճակի հակաճգնաժամային կառավարման վերաբերեալ կոչերով եւ ծրագրային առաջարկներով (որոնցմէ շատերը կը շարունակեն արդիական մնալ նաեւ այսօր), սակայն իշխանութիւնները գանձանք քննարկման առարկայ չդարձուցին:

ՀՀ Դաշնակցության Հայաստանի Գերագոյն Մարմինը կ'ըսէ, թէ մէկ կողմէ արտակարգ դրութեան յստակ ռազմավարութեան բացակայութիւնը, միւս կողմէ հակաճգնաժամային կառավարման առաջարկներու անտեսումը իմաստագր-

կեցին նաեւ արտակարգ դրութեան իրաւական դրութեան եւութիւնը: Լուսարձակի տակ առնուեցաւ նաեւ, կառավարութեան անկարող գտնուիլը տնտեսական անկումը մեղմացնող եւ ընկերային խընդիրները լուծող հաւասարակշիռ քաղաքականութիւն վարելու հարցին մէջ Նոյնպէս: Արդիւնքը՝ ցաւալիօրէն կը նախատեսուի երկրի տնտեսութեան անկում եւ ընկերային վիճակի վատթարացում:

ՓԱՇԻՆԵԱՆ. «ՈՐԵՒԷ ՈՒԾ ԺՈՂՈՎՈՐԴԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՅԻՉԸ ԳԻ ԿՐՆԱՐ ԿԱՇԿԱՆԴԵԼ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՐԻ ԲԱՆԱԿՅՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՍԵՂԱՆԻՆ ՇՈՐՁ»

Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինեան վստահեցուց, որ Լեռնային Ղարաբաղի տագնապի լուծման բանակցութիւններու սեղանին շուրջ նստած է այն անձը, որ կը ներկայացնէ Հայաստանի ժողովուրդը: Հայաստանեան որեւէ ուժ, վարչապետին հաստատումով, չի կրնար կաշկանդել



ժողովուրդին շահերը ներկայացնողը: «Արմէնփրէս»-ի հաղորդումով՝ այս մասին Փաշինեան խօսեցաւ առջանց մամուլի ասուլիսի մը ընթացքին՝ պատասխանելով լրագրողներու հարցումներուն: Ան դիտել տուաւ, որ Լեռնային Ղարաբաղի տագնապի լուծման ձեւաչափին մասին բազմապարտապայտուած է իր կարծիքը, թէ Արցախի Հանրապետության ընտրուած ներկայացուցիչներու մասնակցութիւնը բանակցութիւններուն շատ էական եւ կարեւոր է:

ԱՐՄԵՆ ՍԱՐԳՍԵԱՆ. «ՓՈՐՁԻ ՈՒ ԳԻՏԵԼԻՔԻ ՀԱՍՏԱՐՈՒԹԻՒՆԸ ԴՐԱԿԱՆ ԱՐԴԻՒՆՔԻ ԿԸ ՅԱՆԳԻ»

Նախագահ Արմէն Սարգսեան կը շարունակէ հեռավար գրոյցներն ու քննարկումները հայազգի յայտնի գործիչներու ու գործարարներու, տարբեր ոլորտներու մասնագետներու հետ, որոնք տարբեր երկրներու եւ ընկերություններու մէջ պատկանելի ժառանգութեան համավարակին դժւար պայքարի գործին մէջ ներառուած են:

Հանրապետության նախագահը հեռավար գրոյց ունեցած է ամերիկահայ գործարար եւ բարերար Նուպար Աֆէեանի հետ:

Ամերիկեան Moderna ընկերութիւնը, որուն համահիմնադիրն ու գլխավոր տնօրէնը Նուպար Աֆէեանն է, պատկանելի ժառանգութեան համատեղութեան մշակման ուղիւն մէջ գործունէ շահատանը կ'իրականացնէ: Զինկական փորձարկումներու առաջին փուլով ի յայտ եկած են նախնական տուեալները:

Նուպար Աֆէեան նախագահ Սարգսեանին տեղեկացուցած է, յայտնելով, որ պատուաստանիւթի փորձարկումներու առաջին փուլը



յաջողութեամբ անցած է: Նախագահ Սարգսեանը յաջողութիւն մաղթած է Նուպար Աֆէեանին իր ձեռնարկներուն մէջ՝ ակնկալելով, որ փորձի ու գիտելիքի համադրութիւնը դրական արդիւնքներու կը յանգի:

Հանրապետության նախագահն ու ամերիկահայ գործարարը միտքեր փոխանակած են նաեւ Հայաստանի մէջ համավարակին հետ կապուած իրավիճակին եւ անոր հետեւանքներուն յաղթահարման կարելիութիւններուն եւ ուղիներուն շուրջ: Նախագահը ընդգծած է միատեղ ուժերով իրավիճակը յաղթահարելու կարեւորութեան՝ դիտել տալով, որ այս նոր փորձութեան միայն միասնական ջանքերով կարելի է դուրս գալ:

«Ունակը կը փորձեն Հայաստանի օրինական ներկայացուցիչները կաշկանդել բանակցային սեղանի շուրջ», ըսաւ վարչապետ Փաշինեան եւ կրկնեց՝ ոչ մէկ ուժ կրնայ զիրենք կաշկանդել:

Փաշինեան շեշտեց, որ որեւէ որոշում գոյացնելէ առաջ պետք է խօսիլ Հայաստանի ու Արցախի անվտանգութեան խորհուրդներուն, խորհրդարաններուն եւ ժողովուրդին հետ:

«Ես Արցախի հարցի լուծման այնպիսի իրապարակային պայման կապած եմ մեր ժողովուրդին հետ, որ որեւէ շահարկման տեղ չի կրնար ըլլալ: Ի տարբերութիւն նախկին շարք մը դէպքերու, այսօր բանակցութիւններու սեղանին շուրջ նստած անձը կը ներկայացնէ Հայաստանի ժողովուրդը», ընդգծեց Նիկոլ Փաշինեան:

Ան յայտնեց, որ ինք չի պատկերացնէր լուծում մը, որ ըլլայ առանց Արցախի ընտրուած ներկայացուցիչներու մասնակցութեան:

Պատասխանելով այն հարցումին, թէ արդեօք ինք պատրաստ է Արցախի հարցով հանդիպելու Հայաստանի նախկին նախագահներուն հետ, Փաշինեան ըսաւ, որ հարց չի տեսներ, եթէ այդ անհրաժեշտութիւնը ըլլայ:

«Կայ այսպիսի հանգամանք՝ նախապէս տեղի ունեցած բանակցութիւններուն մասին հաստատութեան կարեւորութիւնը պետական կառավարման համակարգին մէջ առկայ է՝ ձեռքիս տակ է», նշեց վարչապետը:

Անդրադառնալով խաղաղապահ ուժերու հաւանական տեղակայման հարցին՝ վարչապետ Նիկոլ Փաշինեան ըսաւ, որ նախապէս եղած փաստաթուղթերուն ու իրապարակային յայտարարութիւններուն մէջ խաղաղապահ ուժերու գաղափարը միշտ ալ ներկայ եղած է:

ԱՐՅԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԱԳՆ-Ե ՇԱՆՈՒՅԱԳՐԵՐ ՈՒՂԱՐԿԱԾ Ե ՄԱԿ-Ի ԵՒ ԵՒՐՈՊԱՅԻ ԽՈՐՀՈՐԴԻ ԳԼԽԱՎՈՐ ԲԱՐՏՈՒՂԱՐՆԵՐՈՒՆ



Քաղաքացիական եւ քաղաքական իրաւունքներու մասին միջազգային դաշնագիրով եւ Մարդու իրաւունքներու եւրոպական համաձայնագիրով ստանձնած պարտաւորութիւններուն համաձայն, Արցախի Հանրապետության Արտաքին Գործոց Նախարարութիւնը ծանուցագիրներ ուղարկած է համապատասխանաբար Միացեալ Ազգերու Կազմակերպության գլխավոր քարտուղարին՝ Անթոնիօ Կուտերեշին եւ Եւրոպայի խորհուրդի գլխավոր քարտուղարին՝ Մարիա Դելլիմոսիլի ֆոն Վիլիքին Արցախի կողմէ տուեալ միջազգային դաշնագիրներով նախատեսուած ժամանակաւոր իրաւական միջոցներ ձեռնարկելու մասին՝ պատկանելի ժառանգութեան (COVID-19) տարածման սպառնալիքին հիմքով երկրէն ներս արտակարգ իրավիճակ հաստատելու պատճառով:

Ծանուցագրերուն մէջ յիշուած է, որ հանրապետության ողջ տարածքին արտակարգ իրավիճակ յայտարարուած է 12 Ապրիլ 2020-ին 30 օրուան ժամկետով եւ երկարաճգուն է մինչեւ 11 Յունիս: Արցախի Հանրապետութիւնը կը պարտաւորուի Միացեալ Ազգերու Կազմակերպության գլխավոր քարտուղարին եւ Եւրոպայի խորհուրդի գլխավոր քարտուղարին տեղեկացնել արտակարգ իրավիճակի ընթացքին իր կողմէ ձեռնարկուած իրաւական միջոցներուն, ինչպէս նաեւ այդ միջոցներուն կիրառման դադարեցման ամսաթիւին մասին:

Արցախի Հանրապետութիւնը միակողմանիօրէն միացած է քաղաքացիական եւ քաղաքական իրաւունքներու մասին միջազգային դաշնագիրին՝ 1992 թուականին եւ Մարդու իրաւունքներու եւրոպական համաձայնագիրին՝ 2015 թուականին:

Քաղաքացիական եւ քաղաքական իրաւունքներու մասին միջազգային դաշնագիրով եւ Մարդու իրաւունքներու եւրոպական համաձայնագիրով ստանձնած պարտաւորութիւններուն համաձայն, Արցախի Հանրապետության Արտաքին Գործոց Նախարարութիւնը ծանուցագիրներ ուղարկած է համապատասխանաբար Միացեալ Ազգերու Կազմակերպության գլխավոր քարտուղարին՝ Անթոնիօ Կուտերեշին եւ Եւրոպայի խորհուրդի գլխավոր քարտուղարին՝ Մարիա Դելլիմոսիլի ֆոն Վիլիքին Արցախի կողմէ տուեալ միջազգային դաշնագիրներով նախատեսուած ժամանակաւոր իրաւական միջոցներ ձեռնարկելու մասին՝ պատկանելի ժառանգութեան (COVID-19) տարածման սպառնալիքին հիմքով երկրէն ներս արտակարգ իրավիճակ հաստատելու պատճառով:

Ծանուցագրերուն մէջ յիշուած է, որ հանրապետության ողջ տարածքին արտակարգ իրավիճակ յայտարարուած է 12 Ապրիլ 2020-ին 30 օրուան ժամկետով եւ երկարաճգուն է մինչեւ 11 Յունիս: Արցախի Հանրապետութիւնը կը պարտաւորուի Միացեալ Ազգերու Կազմակերպության գլխավոր քարտուղարին եւ Եւրոպայի խորհուրդի գլխավոր քարտուղարին տեղեկացնել արտակարգ իրավիճակի ընթացքին իր կողմէ ձեռնարկուած իրաւական միջոցներուն, ինչպէս նաեւ այդ միջոցներուն կիրառման դադարեցման ամսաթիւին մասին:

Արցախի Հանրապետութիւնը միակողմանիօրէն միացած է քաղաքացիական եւ քաղաքական իրաւունքներու մասին միջազգային դաշնագիրին՝ 1992 թուականին եւ Մարդու իրաւունքներու եւրոպական համաձայնագիրին՝ 2015 թուականին:

ՄԵՐ ՕՐԵՐՈՒ ԺՈՂՎՐԴԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ-3 (ԵՒ ՎԵՐՁ)

ԱՆՑՈՂԻԿ ԵՒ ՄԱՎՅՈՒՆ ՎՏԱՆՔՆԵՐ



Ս. Մահերեճեան

Միացեալ Նահանգներու մէջ (Նաեւ այլուր), կուսակցութեանց իսկական դերակատարութեան ու հեղինակութեան լուսանցքայնացման 2020-ական տարիներով՝ կարելի է կազմել հատորներ: Նման հատորներ արդէն կան: Նշեցինք, որ կուսակցութիւններ յաճախ կը շեղին, աւելի ճիշդ կ'ըլլայ ըսել՝ անոնց կը թելադրուի, կը պարտադրուի շեղիլ եական հարցերու հետապնդումէն, որպէսզի գանգուածները զբաղ պահուին ցուցականով, մակերեսային ու անհետեւանք, զգայացունց, եւ իրենց կեանքին հետ անմիջական կապ չունենող զարգացումներով:

Այս բեմադրութեան մէկ աղանակող օրինակին ականատես եղանք վերջին աւելի քան 6 ամիսներուն (թէեւ արմատները շատ աւելի հին են կու գան): Ամերիկեան քաղաքական բեմը, անոր հետ ժողովուրդին ու ինչո՞ւ չէ՛՝ ամբողջ աշխարհի ուշադրութիւնը ամիսներ շարունակ պատանդ մնաց Նախագահ Տանըլտ Թրամփի դէմ ամբաստանութիւններու եւ պաշտօնագրկումը հետապնդող քննարկումներուն: Հաւանաբար ընթերցողս չէ մոռցած, որ Նախագահը ամբաստանուած էր, եւ Ներկայացուցիչներու տան կողմէ դատապարտուեցաւ «Ուքրանիա-կեյթ»-ով եւ յարակից յանցանքներով: Թրամփ փրկուեցաւ պաշտօնագրկումէ եւ աւելի ծանր հետեւանքներ, շնորհիւ Ծերակոյտին «ներողամտութեան»: Զփորձենք ետ երթալ եւ պրպտել, թէ այդ բեմադրութեան վախճանը խորքին մէջ ինչպիսի՞ մեքենայութիւններու պատճառով էր, վարագոյրին ետին շարժողներէն որո՞նք պիտի շահէին կամ վնասուէին Թրամփի հեռացումէն. այդ բոլորը արդէն բաղձալի կամ անբաղձալի անցեալին կը պատկանին: Հարց տանք, թէ Նախագահին պաշտօնագրկումը ոգի ի բռին հետապնդող դեմոկրատները արդէոք ա՞յդ օրերուն աւելի ուժեղ հիմնաւորումներ ունէին նման դատ հետապնդելու, թէ սկսեալ այն օրէն, երբ Թրամփ ու անոր նմանները անտարբերութեամբ վարուեցան Պսակածե ժահրին բերած սպառնալիքներուն նկատմամբ: (Անշուշտ կարելի է բանալ նաեւ անսպառ սուտերու եւ ինքնաժխտումներու տոպրակն ալ): Փաստօրէն, «Ուքրանիա-կեյթ»-ին հետեւանքով մարդ չմեռաւ, տնտեսական ու ընկերային անհամեմատ տագնապներ չստեղծուեցան, մինչդէռ այս վարակը Միացեալ Նահանգները դարձուց աշխարհի ամենէն մեծ թիւով վարակեալներ ունեցող ու զոհեր տուող, ընկերային ամենէն ծանր վնասները կրող երկիրը: Սուր եւ իրական տագնապներ են գործազուրկները, մամուլը արխիւներ կը պրպտէ, ցոյց տալու համար թէ այս վարակը ար-

դէն իսկ Վիթթեմաի ահաւոր պատերազմի զոհերէն աւելի մեծ թիւով զոհ խլած է, ու դեռ ճամբու կիսուն ենք: (Պուշի օրով, Էսրոնի տագնապը, իսկ աւելի ուշ՝ տնտեսական անկումին հիմնական պատճառներն իսկ հիմա խաղալիք կը թուին արդէն, իսկ 9/11-ի զոհերուն թիւը՝ առանց նսեմացնելու ոճրագործներուն արարքին ահաւորութիւնը...):

Այս նշումներով, չենք ուզեր ըսել, թէ վարակին ծագման եւ տարածման ամբողջ պատասխանատուութիւնը կ'իյնայ Նախագահին եւ կարգ մը գործակիցներու ուսերուն, սակայն գայն դիմագրաւելու, անհրաժեշտ կանխամիջոցները ճիշդ ատենին որդեգրելու անոնց թերացումը անվիճելի է (հոն՝ ուր կանխամիջոցները աւելի կանուխ որդեգրուեցան՝ առանց քաղաքականացուելու, առանց ոչ-գիտական հիմնաւորումներու՝ արձանագրուեցան նուազ վնասներ, հետեւաբար նաեւ՝ բնականոն կեանքի վերադարձի քայլերը սկիզբ առին աւելի կանուխ եւ տրամաբանական ձեւով): Նախագահին ու անոր գործակից-կուսակիցներուն վնասաբեր ծախսերութիւնները կրնային սկուտեղի վրայ դրուած պարգեւ նկատուիլ դեմոկրատներուն համար, ո՞չ թէ տագնապը ինքնանպատակ քաղաքականացումի տանելու, գայն չարաշահելու իմաստով, այլ ցոյց տալու՝ թէ իշխանութեան վրայ պահուող Նախագահն ու իր համբակ գործակիցները ինչպիսի՞ ցնդաբանութիւններով իր պարակ կու գան գրեթէ ամեն օր, մինչեւ իսկ օրը մէկ աւելի անգամ, սխալ ցուցմունքներով վտանգի տակ կը դնեն քաղաքացիները (տեսանք, թէ ինչպէ՛ս՝ Նախագահին կողքին կեցող մասնագետները քաղաքական օրէն կը հերքեն անոր «գիտերը», որոնք մինչեւ իսկ ստեղծեցին պատկերասփիւռն առեւտրական ծանուցում կատարողի տպաւորութիւն...): Մինչդէռ, երոպական կարգ մը երկիրներու պետական վարիչները, անկախ այլապէս քննադատելի եւ անբաղձալի ուղեգիծերէ, այս իմաստով շարժեցան իմաստութեամբ, հետեւեցան գիտութեան մարդոց եւ մասնագետներու թելադրանքներուն, ըրին կարելին, բայց անկէ անդին, իրենց ժողովուրդներն ալ տեսան, որ համաճարակը ունի նաեւ անկարելի սահմաններ...

Նման կրաւորականութիւն՝ դեմոկրատներու կողմէ, կրնայ դիտուիլ իբրեւ ազնիւ վերաբերմունքի արտայայտութիւն, այսինքն՝ խուսափում այս տագնապը աժանօրէն

քաղաքականացնելու փորձերէ: Սակայն Նախընթաց փորձառութիւնները կը ստեղծեն կասկածներ, թէ ընտրապայքարներուն իրական վարիչները կը մնան լուսարձակներէ հեռու եւ անոնց համար շահեկան չէ նման «փոթորիկ» ստեղծել՝ երբ իրենք պատրաստ չեն, անկէ շահ չեն կրնար ապահովել: Այլ խօսքով, դեմոկրատ եւ հանրապետական՝ տեղ մը կը նոյնանան հասարակաց խրամատին մէջ. Նորագոյն օրինակը. Միասնաբար քուէարկուած՝ նիւթական օժանդակութեանց գումարներուն մեծ ու հարուստ ընկերութեանց-դրամատուներուն գանձանակները հոսեցնելու իրականութիւնը (անոնցմէ մէկ քանին վերադարձուցին իրենց տրամադրուած գումարները, որպէսզի իսկապէս դժուարութեան մատուած փոքր ընկերութիւններ օգտուին):

Այլ երկիրներու մէջ, չարաշահութեան մրցանիշներ ալ կ'արձանագրուին, ինչ խօսք...: Իսկ արդեօք բարեբախտութիւն պէտք է սեպել այն, որ շրջանային կառավարական մակարդակներու վրայ տեղ ունին նաեւ կարողներ եւ իմաստուններ:

«ԱԿՏ»ԻՆ ՏԱՐԱՎՈՒՄԸ՝ ԱՅՆՈՒՐ

Կուսակցութեանց դերին նսեմացումը, մարդկութիւնը կենսաւորող եւ բարգաւաճումի տանող գաղափարական աշխարհին լուսանցքայնացումը եթէ ամերիկեան եւ նման կարգ մը երկիրներու «մենաշնորհ»ն է, չէ բացառուած, որ անոր արձագանգները տարածուին զարգացման մէջ եղող երկիրներու մէջ,



հոն՝ ուր «ամերիկեան կամ արեւմտեան արժեքներ» յաճախ կ'ընդունուին առանց քննարկումի եւ հարց ու փորձի, առանց դատողութեան:

Ի մտի չունինք այն երկիրները, որոնք արդէն իսկ ճանաչուած են իբրեւ բնատիրական, գինուորականներու խաղալիք եւ միակուսակցական: Անոնք ինքնաբերաբար դուրս կ'իյնան ներկայ քննարկումէն: Ի մտի ունինք այն երկիրները, ուր կայ բազմակուսակցականութիւն, կը խաղողի անկէ բխող ժողովրդավարութեան խաղը (կամ պատրանքը), եւ սակայն, իշխանական կուսակցութեանց մէջ ԱՆՅԱՏ մը կը դառնայ առանցքային դէմք, անվիճելի հեղինակութիւն, որուն որոշումներն ու ծրագիրները առանց այլեւայլի կ'որդեգրուին նախ իր կուսակցութեան, ապա նաեւ իշխանութիւնը մարմնաւորող օղակներու կողմէ: Նոյնը կը պատահի նաեւ ընդդիմադիր կուսակցութիւններու մէջ, անոնք ըլլան խորհրդարանա-

կան կամ արտախորհրդարանական: Հետեւանքը կ'ըլլայ այն, որ նման երկիրներու մէջ իրողապէս կը ստեղծուի անհատ-մենատներու կողմէ ստեղծուած՝ շինծու ժողովրդավարութիւն մը, շատ աւելի Նախական եւ վնասաբեր՝ քան Միացեալ Նահանգներու ընկալեալ պատկերը: Այդ երկիրներուն մէջ, կուսակցութիւն մը յաճախ կը ծնի ու կը գործէ իր հիմնադիր-դեկավարին հետ, իսկ եթէ ան որեւէ պատճառով հեռանայ կամ հեռացուի դիրքէ-պաշտօնէ, կուսակցութիւնը փոփոխուի կու գայ, անդամները կը բախեն նոյն տիպի այլ կուսակցութիւններու դռները, պարզ այն պատճառով, որ ԳԱՂԱՓԱՐԱԿԱՆ համապարփակ ծիրը, հիմունքը կը մնան բացակայ, լաւագոյն պարագային՝ թերի: Միացեալ Նահանգներու պարագային, կուսակցութեանց անուանական ներկայութիւնը ձեւով մը ինքզինք նուիրականացուցած է եւ դարձած՝ ընդհանրապէս անբաղձալի իրականութիւններ ծածկող թափանցիկ շղարշ մը:

Բնականաբար հարց կրնայ ծագիլ, թէ ի վերջոյ, ո՞րն է Նախընտրելին. բռնատիրութիւնը, միակուսակցական կարգավիճակը, թէ՞ ձեւական ժողովրդավարութիւնը, այսինքն՝ չարեաց փոքրագոյնը:

Նման հարցում անհեթեթութիւն է, որովհետեւ նախ եւ առաջ կ'անտեսէ մարդուն իմաստութիւնը, դարբերու փորձառութիւնն ու անկէ բխած բարիքները: Պարզ ու կարճ պատասխանը այն է, որ մարդը, ո՞ր որ ալ գտնուի, իրաւունք ունի բարօր եւ ապահով կեանքի պայմաններ ունենալու, ժողովրդավարութիւնը, ինքնին, կ'ենթադրէ, որ ժողովուրդին կողմէ ընտրուած ներկայացուցիչները, ինչ պաշտօնի ալ որ կոչուին, հարկադրուած զգան ընդհանրապէս երկրին ու զանգուածին ակնկալիքները կենսաւորելու: Պետական կամ կուսակցական պատասխանատու դիրքերու պէտք է հասնին իմաստուն ներկայացուցիչներ, եւ ո՞չ թէ խեղկատակ, տկարամիտ եւ ամբոխավար խամաճիկներ: Այլ խօսքով, այս մօտեցումով ու տրամաբանութեամբ է որ պէտք է վերաբերուին կուսակցութիւնները (բազմակարծութիւնը անխուսափելի է ու՝ բարիք), տրամաբանականի սահմաններուն մէջ յարգանք պարտադրեն իրենց գաղափարներով եւ տեսլականներով, եւ ո՞չ թէ առաջնորդի դիրքին վրայ եղողին «գրաւչութեամբ»: Երկիրներ կառավարելու համար, մինչեւ իսկ ամենէն անհաշտ կուսակցութիւնները պէտք է կարենան գտնել գործակցութեան եւ ազնիւ մրցակցութեան դաշտեր, իսկ ծանր տագնապի օրերուն՝ ունենան մինչեւ իսկ ամենէն սուր հակամակրողին հետ համակցութիւն գոյացնելու յանդակութիւնը: Նման յանդակութիւն բարիք բրած է բազմաթիւ երկիրներու:

Եզրակացնելու համար ըսենք, որ Պսակածե ժահրն ու նման պատուհաններ ի վերջոյ անցողիկ են, ունին ժամանակաւոր բնոյթ, որքան ալ երկարատեւ ըլլան ու ծանրագոյն հետեւանքները թողուն աշխարհի տարածքին: Աւելի կարեւորը՝ մնա-

ՄԱՐԴԱԿԵՐՏՄԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՅՑ



Յուշիկ Ղազարեան

Պատերազմի ավարտէն ի վեր կը լսենք մարդակերտման կարեւորութեան մասին: Խորքին մէջ, նախապատերազմեան շրջանին ալ «մարդ պտրաստել»ը մեր ամօրեայ հիմնական նիւթերէն մէկը եղած էր: Սակայն այս հարցին շուրջ բոլոր քննարկումները ոչ միայն թուղթի վրայ արծանագրուած անիրագործելի ծրագիրներուն շարքին դասուեցան, այլ անելին՝ խօսուած բառի սահմաններուն մէջ մնալով չարժանացան նոյնիսկ գրաւոր արծանագրութեան:

Նախորդ տարիներուն պատերազմը եկաւ ամբողջովին մերկացնելու մեր բացթողումը: Բազմաթիւ մարդ երու, յատկապէս կրթամշակութային քնազաւառին մէջ մեր մեծագոյն տագնապը եղաւ արհեստավարժներու չգոյութիւնը: Բացայայտուեցաւ, որ մենք, իբր գաղութ, երկար ատեն այնքան վարժուած էինք դուրսէն, յատկապէս հայրենիքէն եկած արհեստավարժներու, որ մենք մերը չէինք պատրաստած: Աւելին՝ չէինք յաջողած ստեղծելու տեղական ուժերը քաջալերող մթնոլորտ մը, ուր գաղութի երիտասարդները մղուէին դէպի արհեստավարժութիւն՝ այս կամ այն մարզին մէջ:

Այսօր մենք կը գտնուինք ինքզինք պարտադրող կացութեան մը դիմաց: Պատերազմի շրջանին «կցեցինք, կցմըցեցինք», այս ու այն միջոցով պահպանեցինք անխիւն շարժումը: Տարուած աշխատանքը, որքան ալ երախտապարտ ըլլանք անոր համար, այլեւս բաւարարեցնող չէ: Իսկ աշխատանքի նոր ծաւալը մեզ կը դնէ մարդակերտման հրամայականին դիմաց:

Վերոյիշեալ մտահոգութիւններուն կու գայ անելնալու պատերազմին գործած աները երիտասարդութեան հոգեմտաւոր աշխարհին վրայ: Վերջնականապէս բուժելու համար երիտասարդութիւնը պատերազմի սպիներէն, անհրաժեշտ է ստեղծել հոգեկան վերապատրաստման ու վերականգման համակարգ, ըստ յարմարութեան իրականացնելով դասընթացքներ, սեմինարներ ու բանակումներ, ինչպէս նաեւ կրթական համակարգը համալրել դասարանային ու արտադասարանային աշխատանքներով, որոնք կը հարստացնեն մանուկին ու պատանին հոգեմտաւոր աշխարհը եւ կ'ամբողջացնեն պատերազմի տարիներու ստեղծուած պակասը:

Պէտք չէ մոռնալ, որ մեր գաղութային համակարգը Յեղասպանութեան ցնցումով ստեղծուած համակարգ է եւ մեզմէ հարիւր տարի ամառ մեր կառոյցները հաստատողները գործի անցած էին մեր այս-

օրուան մտահոգութիւններով: Անոնց լաւագոյն լուծումը եղաւ հաստատել այն կառոյցները, որոնց բարիքները այսօր մենք կը վայելենք, գաւոնք ժամանակի պահանջներուն յարմարեցնելով: Յաճախ կը լսենք այն ամարկութիւնը, թէ մեր նախահայրերը ցեղասպանութենէն գալով, որքա՞ն ճիգ եւ ծախս թափած են



«քարերուն վրայ»: Այս ամարկութիւնը ներկայացնողները կը բաժնուին հիմնական երկու խումբերու. առաջինը՝ կը նախընտրէ, որ այդ կառոյցներուն (դպրոց, ակումբ, եկեղեցի) փոխարէն հիմնուին տնտեսական հասոյթ ապահովող կառոյցներ (վաճառատուն, գործարան, արհեստանոց եւ այլն): Ըստ անոնց, առաջնահերթ կը նկատուի գաղութին տնտեսական վիճակի բարելաւումը: Երկրորդ խումբը յարմար կը նկատէ, որ այդ գումարները ծախսուին, մարդ պատրաստելու վրայ: Երկու խումբերն ալ ջերմեանդութեամբ կը պաշտպանեն իրենց տեսակետները, խոցելի գտնելով մեր նախնիներուն «քարի վայ դրամ թափել» ու վարքագիծը:

Այսօր, երբ կը գտնուինք վերականգման փուլի շեմին, անգամ մը եւս կը լսենք նոյն ամարկութիւնները: Անգամ մը եւս ձայները կը բարձրանան, անհեթեթ գտնելով եկեղեցիներու, դպրոցներու եւ մարզական ու մշակութային կեդրոններու վերակառուցումը: Սակայն այս ամարկութիւնները ներկայացնողները հաւանաբար կ'անտեսեն, կամ չեն անդրադառնար, որ մարդակերտման իրականացման համար հարկ է ունենալ յարմար ենթակառոյց: Մանուկներուն ու պատանիներուն հոգեկան վերապատրաստման եւ կրթամշակութային համակարգի զարգացման համար պէտք է ունենալ մասնագէտներ: Փորձը մեզի ցոյց տուաւ, որ կարիքը ունինք առաւելաբար տեղական ուժերու: Իսկ անոնց պատրաստութիւնը կ'ենթադրէ յարմար կառոյցի գոյութիւն: Ինչպէ՞ս կարելի է պատրաստել ապագայ ուսուցիչը, եթէ չունենանք նախ այդ ճամբան ընտրող խրախուսող համակարգ, դասընթացքներ, որոնք համար պէտք է ըլլան յարմարաւէտ կեդրոններ, սարքաւորուած դասարաններ... այլ խօս-

Կամիջ

ՏԱԼՈՒ, ՆՈՒԻՐԵԼՈՒ ԲԱՐԵՄԱՍՆՈՒԹԻՒՆԸ ՍՄՔԱՎԾ Է

Փշակն

Ձեզմէ ո՞վ չէ ապրած տալու, նուիրելու առթած երջանկութիւնը: Տալը անպայման նիւթական թէ բարոյական պարտքի մը փոխարժէքը տրամադրել չի նշանակեր: Պարտքի, պարտականութեան, պարտաւորութեան հետ ալ կապ չունի ընդհանրապէս:

Բարեկամի մը կեանքը լաւացնելու, աշխատանքը բարելաւելու, մեր շրջապատը դրական փոփոխութեան ենթարկելու տեսչէ մը բխած կ'ըլլայ տալու, նուիրելու, օգնելու կամ յառաջ մղելու մարդկային բարեմասնութիւնը:

Հանդուրժող, հոգատար ըլլալու մարդկային առաքինութիւն մըն է ան, որ կ'արտացոլայ միայն ամոռն մտածելակերպ, ազնիւ հոգի ունեցող անձերու վարքին ընդմէջէն ու այդ ամոռնութիւնը կաթիլ առ կաթիլ կը տարածուի մեր միջավայրին մէջ, վարակիչ կը դառնայ, որովհետեւ դրական մտածողութենէ կը ծնի:

Ուսուցիչը ուսուցանելով ցոյց կու տայ աշակերտին գիտութեան լոյսին տանող ճամբան, որպէսզի ան ինքնուրոյն զարգանալու կարելիութիւնը ձեռք ձգէ: Նոյն ձեւով ալ վարպետը՝ աշակերտին, մայրը՝ զաւկին, դեկավարը՝ գործող ու ծառայող տարրին: Տալ, ուղղել, քաջալերել առանց ակնկալութեան:

Յաւօք տալու, նուիրելու, օգնելու, յառաջ մղելու մարդոց բարեմասնութիւնները ոչ միայն սմբիլ սկսած են, այլեւ փոխարինուած են

ամենելու, առնելու եւ միայն առնելու վատառողջ մոլութեամբ:

«Ինչ որ փրցուցիր», «Օգտուելու նայէ» ... Նման արտայայտութիւններով մեկը միւսը կը խրատէ, եսպաշտ կը դարձնէ:

Տգիտութեամբ արդիւնք է, փորձութեամբ, թէ ընդհանրապէս կեանքի դժուարութիւններուն հետեւանքով մարդկային առաքինութիւններու ողբալի անկումին:

Անհատական յաջողութիւնները արդիւնաւէտ չեն ըլլար, եթէ հաւաքական կեանքը թաւալգոր անկումի մատնուի: Յաջողակ անհատը միջավայրն ալ զարգացնելու, քայլ մը առջեւ տանելու մասին մտածելու է, այլապէս աներակներու վրայ իշխող թագաւորին պիտի նմանի ան, այն թագաւորին, որ նենգաբար ամեն ջանք ի գործ կը դնէ իր անմիջական շրջանակը խաւարի մէջ եւ իրմէ կախեալ պահելու համար:

Երանի անոնց, որոնք անվերապահ տալու, անմասնորոշ նուիրելու հաճոյքը վայելելու իմաստութիւնը ունին:



ըով՝ արդիական ենթակառոյց: «Մարդ պատրաստել» չի նշանակել միայն ապագայ դեկավարներու խաւը պատրաստել, այլ կը նշանակէ նաեւ պատրաստել կեանքի գաւազան մարդերուն մէջ յաջողակ մարդիկ, որոնք կրնան իրենց միջավայրին մէջ դրական ներգործութիւն ունենալ եւ գայն քայլ մը առաջ տանիլ: Նորարար արուեստագետին, ներշնչող գիւտարարին ու փայլուն մարդիկին պատրաստութիւնը նոյնքան կարեւոր է եական է, որքան գաղութի տնտեսական բարօրութիւնը: Փորձը մեզի ցոյց կու տայ, որ հոգեմտաւոր զարգացումը իր հետ կրնայ բերել տնտեսական վերելք, բայց տնտեսական բարօրութիւնը, անպայմանօրէն մշակութային զարգացում չի բերեր, ընդհակառակը՝ գեի կեանքը յաճախ կրնայ տանիլ դէպի մշակութային սնանկութիւն եւ հոգեւոր ներաշխարհի ուժացում:

Վեճերը կը վերաշխուժանան: Հանրութիւնը ամբողջութեամբ համաձայն է, որ վերականգման այս փուլին շեշտը պէտք է դրուի մարդու վերականգման վրայ, սակայն միջոցներուն շուրջ տարակածութիւն կայ: Ծատեր յարմար կը տեսնեն, որ վերականգման յատկացուած գումարները «չծախսուին քարերու վրայ, այլ մարդ պատրաստենք, մարդ»: Բայց ո՞ր պիտի պատրաստենք այդ մարդը: Տեղասպանութենէն ճողոպրած մեր նախնիները այս հարցումին պատասխանը գտած են հիմնելով յարմար կառոյցներ: Այսօր մենք ալ կը գըտնուինք այդ կառոյցները վերականգնելու եւ ժամանակի կարիքներուն յարմարեցնելու հրամայականին առջեւ: Ըստ հարկին պիտի ծախսենք քարերուն վրայ, որովհետեւ այսօր չկատարուած ծախսին փոխարէն հետագային կրնանք շատ անելի սուղ գին վճարել:

ԵՐԲ ԹՇՆԱՄԻՆ ԾԱԾՈՒԿ ԿԸ ԳՈՐԾԷ...



Երիա Թաշճեան

Վերջերս բաւական խօսուեցաւ Արցախի այսպէս կոչուած ատրպէյճանական համայնքին մասին, որ կ'ուզէ արցախեան բանակցութիւններուն մաս կազմել: «Թուիթթըր»ի վրայ այսպէս կոչուած «Լեռնային Ղարաբաղի ատրպէյճանական համայնք» (Azerbaijani Community of Nagorno Karabakh) էջը հակահայկական հսկայական քարոզչութիւն կը տանի, իսկ միւս կողմէ 10 Մայիսին Թուրքիոյ մէջ «Արեւմտեան Ատրպէյճանի քարտէս կառավարութեան» հիմնադրումը պէտք է ազդանշան ըլլայ բոլորիս, որ մինչ հայաստանեան քաղաքական իրավիճակը օրէ օր կը բարդանայ, թշնամին լուրջ քայլերու կը դիմէ:

«Լեռնային Ղարաբաղի ատրպէյճանական համայնքի» անդամները հսկայական քարոզչութիւն կը կատարեն Եւրոպական Միութեան մէջ: Զետաքրքրական էր, օրինակ, որ Ս. Յարութեան տօնին անոնք հայերէնով բարեմաղթութիւններ ուղղած էին արցախցիներուն՝ շնորհաւորելով անոնց Ս. Չատիկը եւ ըսելով, որ անոնք կը շնորհաւորեն ատրպէյճանցի հայերու Չատիկը եւ յոյս՝ կը յայտնեն, որ մօտիկ ապագային «Ղարաբաղը կը վերադառնայ մայր Ատրպէյճանի կազմին»:

«Թուիթթըր»ի այս էջը հակահայ հսկայական քարոզչութիւն կը կատարէ՝ տարածելով նկարներ, ուր կ'երեւին սպանուած ատրպէյճանցիներ եւ ատրպէյճանական քանդուած գիւղեր, որոնք կը գտնուին Լեռնային Ղարաբաղի տարածքին մէջ: Օրինակ, նկարի մը կ'ընկերակցի բացատրական հետեւեալ գրութիւնը.



«Ժամագործ հայրս Զարվաճառի իր խանութին դիմաց: 1 Ապրիլին, երբ հայկական ուժերը շրջան մտան, այրեցին խանութը, հայրս փախուստ տուաւ դէպի Պաքու եւ այդ օրէն ի վերան ժամագործ չէ»: Դու կը տեսնենք, թէ ատրպէյճանական կողմը ինչպէ՞ս զգացականօրէն կը մօտենայ եւ կը փորձէ հանրութեան մէջ ստեղծել հայու տիպար մը, որ, ըստ իրենց, եղած է ոճրագործ եւ բռնութիւնը սիրող: Էջը նաեւ «tag» կ'ընէ Եւրոպական Միութեան, ՄԱԿ-ի եւ մարդկանց իրաւանց մարմիններու ընկերային ցանցերու այլ էջեր՝ հակահայ քարոզչութիւն տարածելու համար: Այս համայնքին կամ կազմակերպութեան նախագահն է Թուրալ Կանճալը, որ բաւական մեծ համբաւ ունի ատրպէյճանական ընկերային ցանցերուն մէջ, ան նաեւ Ատրպէյճանի խորհրդարանի երեսփոխան է: Անոր թուիթթըրեան էջին հետեւելով կը տեսնենք, որ ան բարեկամական յարաբերութիւններ ունի եւրոպացի եւ ռուս բազմաթիւ վերլուծաբաններու եւ լրագրողներու հետ: Այդ էջին հետեւելով

կրնանք տեսնել, թէ խումբ մը երիտասարդ հետազօտողներ ու ակադեմականներ կը տարածեն լուրեր եւ քննարկումներ կը կատարեն արեւմտեան եւ ռուսական հետազօտական ու պետական կեդրոններու հետ: Այս համայնքի էջին կողքին նաեւ կը գործեն բազմաթիւ ոչ-կառավարական կազմակերպութիւններու եւ պետական նախաձեռնութիւններու այլ էջեր, որոնք կը տարածեն հակահայ լուրեր եւ կը խեղաթիւրեն արցախեան պատմութիւնը, օրինակ՝ «The Humans Of Karabakh», «Khankindi City», «AzDiplomacy Volunteers», «Justice For Khojaly Campaign» եւ այլ բազմաթիւ կազմակերպութիւններու ու անձերու էջեր: Անոնք կը տարածեն ատրպէյճանամետ լուրեր ոչ միայն ատրպէյճաններէնով կամ անգլերէնով, այլ նաեւ արեւելահայերէնով:

Այս բոլորին աւելնալու եկաւ 10 Մայիսին Թուրքիոյ մէջ «Արեւմտեան Ատրպէյճանի Աքսորեալ Կառավարութեան» հիմնումը: Ծափեր ճահմակլի, որ Զայսերի համալսարանին մէջ հայկական հարցերու «մասնագէտ» է, եւ որուն «նախահայրերը ապրած են ներկայ Զայաստանի սահմաններուն մէջ», հիմնեց

աքսորեալ կառավարութիւն մը Թուրքիոյ մէջ: Ինչո՞ւ Թուրքիոյ մէջ եւ ոչ թէ Ատրպէյճանի, հետաքրքրական է: Սակայն մեզի կը թուի, թէ թրքական գաղտնի գործակալութիւնը՝ ՄԻԹ-ը այս նախաձեռնութիւնը ապագային կրնայ օգտագործել Զայաստանի դէմ՝ փորձելով հակաշրջել Արցախի տագնապը, Զայոց Յեղասպանութեան հարցը եւ հայկական պահանջները:

Ակնյայտ է, որ նման գործելաոճով «Արեւմտեան Ատրպէյճանի Աքսորեալ Կառավարութեան» հետագայ գործողութիւններուն լոյսին տակ կը ստեղծուի թուրք-ատրպէյճանական ռազմավարական դաշինքը, որուն հիման վրայ Թուրքիա կարելիութիւն կ'ունենայ ո'չ միայն մասնակցելու, այլ նաեւ առաջնորդելու այդ «կառավարութեան» ծրագիրները: Ասիկա կարելի է նկատել համաթուրանական ծրագրի մէկ մասը, որ ո'չ միայն ուղղուած է Զայաստանի եւ Արցախի դէմ, այլ նաեւ շրջանի երկիրներուն: Այս ծրագիրով երկարատեւ հեռանկարի մէջ թրքալեզու պետութիւններու հա-

մախմբումով եւ միասնական ռազմաքաղաքական ծրագիրներով արտաքին կարգ մը ուժեր կը նախատեսեն համաթուրանականութիւնը օգտագործել Ռուսիոյ, Իրանի եւ Նոյնիսկ հեռաւոր Չինաստանի դէմ՝ ուղղուելու հարցով:

Պահ մը նայինք, թէ ինչ կը կատարուի Զիւսիսային Սուրիոյ մէջ, ուր Աֆրիկը դարձաւ թուրքմեններու կողմէ բնակուած շրջան մը. պահ մը երեւակայենք, թէ ինչ կրնան ընել Իրանի հիւսիսը բնակող ատրպէյճանցիները, եթէ Իրանի տարածքային ամբողջականութիւնը խաթարուի ներքին անկայունութեան պատճառով: Այսպիսի դէպք պատահած էր 1946-ին, երբ ատրպէյճանցիները Իրանի մէջ հիմնեցին «Ատրպէյճանի Զանրապետութիւնը»՝ խորհրդային Միութեան օժանդակութեամբ:

Ատրպէյճանական լրատուական միջոցները խանդավառութեամբ արձագանգեցին այս «աքսորեալ կառավարութեան» ստեղծման լուրին: Ըստ ատրպէյճանական «Թուրան» լրատու գործակալութեան, Թուրքիոյ մէջ բնակող բազմաթիւ ատրպէյճանցիներ պատրաստակամութիւն յայտնեցին միանալու այս «կառավարութեան» եւ օժանդակելու անոր նախաձեռնութիւններուն: Ծահմակլի նաեւ յայտարարեց, որ շուտով կը նախատեսուի ընտրութիւններ կատարել եւ ստեղծել «Արեւմտեան Ատրպէյճանի Գերագոյն Խորհուրդը», որ պիտի կատարէ քսորեալ խորհրդարանի դերը («Եւրասիա Ռիվիու», 12 Մայիս 2020):

Զարգացող մտերմ շատ են. արդեօք այս նախաձեռնութիւնը կարելիութիւն կրնայ ունենալ ապագային կամաւորական ջոկատներ կազմակերպելու, զանոնք ուղարկելու Արցախ եւ պատերազմ վերսկսելու...

Չի բացառուիր, որ «Արեւմտեան Ատրպէյճանի Աքսորեալ Կառավարութեան» կազմին մէջ ապագային ստեղծուի մարտական-գիւղական կառոյց մը, որուն համապատասխան քարոզչութեամբ կը միանան թրքական ցեղեր կամ Նոյնիսկ

հազարաւոր սուրիացի գինեալ վարձկաններ, որոնք կը գործեն Թուրքիոյ վերահսկողութեան տակ:

Արդեօք Թուրքիան կ'ուզէ արցախեան խաղաքա՞րտը օգտագործել Զայաստանի եւ Սփիւռքի դէմ՝ Եւրոպական Միութեան մէջ: Արդեօք մինչ հայաստանեան քաղաքական կուսակցութիւնները կ'ընկղմին քաղաքական նեղ բանավեճերու մէջ, թշնամին դարձեալ ծածուկ կերպով պատերազմի՞ կը պատրաստուի: 14 Մայիսին յայտարարուեցաւ, որ Ատրպէյճան 18-22 Մայիսին հսկայական ռազմական փորձեր պիտի կատարէ Արցախի սահմաններուն մօտ: Այս ռազմափորձին պիտի մասնակցին 10.000 զինուորներ, 120 հրասայլեր, 200 հրետանիներ եւ 30 հակաօդային սարքեր: Արդեօք ասիկա պատերազմի պատրաստութեան ազդանշան չ'է:

Եղիշէ Չարեցցին խօսքերը միշտ կը մնան այժմեական՝ «Ո՛վ հայ ժողովուրդ, քո միակ փրկութիւնը քո հաւաքական ուժի մէջ է»:

Ռազմավարական լուրջ աշխատանքի ժամանակը հասած է, եթէ արդէն իսկ ուշ չ'ենք...

ԱՆՅՈՂԻԿ...

Սկիզբ՝ էջ 4

յուն սպանալիքներուն յաղթահարումն է եւ աւելի արդար ու բարձր աշխարհի մը հետամտութիւնը, որ, ինքնին, կը հարկադրէ իսկական ժողովրդավար երկիրներու միջեւ լայն գործակցութիւն, ամէն տեսակի անարդարութեան դարմանում: Դոն հասնելու ճամբան չ'անցնիր ժողովրդավարութիւնն ու գաղափարական կուսակցութիւնները նահատակելու «սխրագործութիւններէն»: (Քննարկումը կարելի չ'է սպառած նկատել, սակայն կ'արժէ երբեմն թափանցել Պսակաճեւ վարակին իրական, կամ այլ՝ շինծու տագնապներէն բարձրացող մշուշէն անդին):

«ԳԱՆՁԱՍԱՐ»
ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹԻ ԱՆՁՆԱԿԱԶՍ

Խմբագիր՝ Չարմիկ Չիլվերչեան-Պողիկեան
Սրբագրիչներ՝ Չեփիւմ Պապիկեան-Աւագեան
Յուշիկ Ղազարեան

Ձեւաւորող՝ Յովսէփ Չալօղլեան
Գրաշար՝ Անի Թովալեան-Սարուխան
Արաբերէն լուրերու թարգմանիչ՝ Մարէն Պապեան
Կայքէջի պատասխանատու՝ Զրիստ Խրոյեան
Լուրերու պատասխանատու՝ Լուսին Ապաճեան-Չիլվերչեան
Չաշուապահ՝ Սեւակ Կիլվանեան

- Ծանուցողներէն եւ աշխատակիցներէն կը խնդրուի ծանուցումներն ու յօդուածները խմբագրատուն ուղարկել ամենէն ուշը Երկուշաբթի օրերը:
 - Նախընտրելի է յօդուածներն ու թղթակցութիւնները ուղարկել գրաշարուած:
 - Խմբագրատուն ուղարկուած նիւթերը, հրատարակուին կամ ոչ, չ'են վերադարձուիր:
 - Խմբագրութեան վերապահուած է ստացուած յօդուածներու հրատարակելու կամ չ'հրատարակելու որոշումը:
 - Ձեր ծանուցումներն ու յայտարարութիւնները կարելի է հրապարակել «Գանձասար»ի տպագիր տարբերակին եւ կայքէջին միջոցով:

ՔԱՐԻՊԵԱՆ ԾՈՎԸ ԻՐԱՆ-ԱՄՆ ԴԻՄԱԿԱՅՈՒԹԵԱՆ ՆՈՐ ՓՈԻԼԻ ԹԱՏԵՐԱԲԵՄԸ

Արամ Շահնազարեան
Alikonline-ի պատասխանատու-խմբագիր

Աշխարհի հետ Իրանի առեւտրատնտեսական յարաբերությունները հնարավորինս սահմանափակելու ԱՄՆ քաղաքականության լարուած կիզակետը այս օրերին Իրանի եւ Վենեզուելայի միջեւ կենսուժային առեւտուրն է, ինչն էլ Քարիպեան ծովը կարող է վերածել Թեհրանի եւ Ուաշինգթոնի դիմակայության հերթական փուլի թատերաբեմի:

Փաստորեն Իրանի եւ Վենեզուելայի միջեւ առեւտրային կապն Իսլամական Հանրապետության

կերպ թթափել ամերիկեան պատժամիջոցների ճնշումը: Իրանը Վենեզուելային ապահովում է նախաձեռնական կեդրոնների համար անհրաժեշտ սարքավորումներով եւ վառելիք նավթով, որոնց դիմաց Վենեզուելան Իրանին վճարում է ոսկու ձուլակտորների տեսքով:

Իրանական փորձագիտական շրջանակներն ընդգծելով պատժամիջոցների ճնշման ներքոյ յայտնուած երկու երկրների յարաբերությունների կարեւորությունը նշում են, որ Թեհրանի եւ Քարաքապի միջեւ



վրայ ԱՄՆ-ի՝ առաւելագոյն ճնշման քաղաքականության հերթական թիրախն է:

Լարուածութեան նոր փուլի մեկնարկը տրուեց ընթացիկ ամսուայ սկզբին, երբ Արեւմտեան ՉԼՄ-ները յայտարարեցին, որ Իրանցի մասնագետների կողմից Վենեզուելայի նախաձեռնական կեդրոնների վերագինման դիմաց Կարակասը Թեհրանին ոսկու ձուլակտորներով է վճարել, եւ որ այժմ էլ նման կերպ է վճարում Իրանի կողմից առաքուող վառելիքի դիմաց:

Այս համատեքստում ԱՄՆ-ը յայտարարեց, որ իր ռազմաւետրին գործուղում է Քարիպեան ծով, որպէսզի թոյլ չտայ Իրանին եւ Վենեզուելային շրջանցելու սահմանուած պատժամիջոցները: Միեւնոյն ժամանակ Իրանն էլ ԱԳ նախարարի եւ քաղաքական հարցերով նրա տեղակալի մակարդակով շտապեց յայտարարել, որ դէպի Վենեզուելա ուղղութիւն վերցրած Իրանական լցանաւերի դէմ ցանկացած սպառնալիք հանդիպելու է համաչափ, համարժեք եւ վճարական պատասխանի, եւ որա հնարավոր հետեւանքների պատասխանատուութիւնը կրելու է Ուաշինգթոնը:

Իրանը եւ Վենեզուելան տեւական ժամանակ է, ինչ յայտնուել են ԱՄՆ ընդհանուր պատժամիջոցների նշանակետում: Գաղտնիք չէ, որ երկու երկրներն էլ փորձում են ընդլայնելով երկկողմ առեւտրատնտեսական յարաբերությունները, ինչ-որ

առեւտրատնտեսական յարաբերությունների ամրապնդումը կարող է «հակաթոյնի» ազդեցութիւն ունենալ ամերիկեան պատժամիջոցների պայմաններում, յատկապէս, երբ դրանք տեղի են ունենում փոխանակման տեսքով՝ շրջանցելով միջազգային առքայում ընդունուած արտարժոյթով (հիմնականում՝ տոլար) վճարումները:


Ի հարկէ նրանք շտապում են զգուշացնել նաեւ, որ վճարումների նման համակարգն ունի իր սահմանափակումը, որը հիմնականում պայմանաւորուած է Վենեզուելայի ոսկու պաշարների սահմանափակութեամբ: Որպէս այլընտրանք նրանք առաջարկում են հետեւել չինական օրինակին, եւ վճարումների համար օգտագործել ազգային արտարժոյթները:

Յիշեցնենք, որ Չինաստանը աշխարհի ամենաաշխոյժ երկրներից մէկն է, որը գործարքները կարգաւորելու համար օգտագործում է դրամական համաձայնագրերը՝ առանց տոլարի շրջանառութեան անհրաժեշտութեան:

Գաղտնիք չէ, որ պսակաձեւ ժաիրի համավարակի ֆոնին, երբ համաշխարհային տնտեսական ճգնաժամի պատճառով միջազգային կենսուժի շուկաներում կտրուկ նուազել է նաւթի եւ նախաձեռնական կախանջարկը, գների անսպասելի անկումը եւ առաջարկի ու պահանջարկի միջեւ հասասարակչութեան խախտումը լուրջ խնդիրներ է առա-

Աշակերտական Անկիւն

ՁԵՐԲԱՉԱՏԻՆՔ ԱՍՉԿՈՏՈՒԹԵՆԵՆ



Այլն Քիլեճեան

Համարձակութիւնը բնաւորութեան լաւ գիծ մըն է, որովհետեւ համարձակութեամբ մարդ կրնայ կեանքին մէջ հասնիլ բարձր դիրքերու, անշուշտ եթէ հեռու մնայ չափազանցութենէն, որ կրնայ շատ վնասակար ըլլալ:

Արդեօք ինչպէ՞ս մարդ կրնայ համարձակ ըլլալ:



Համարձակ ըլլալու համար, նախ պէտք է ինքնավստահ ըլլալ, ապա՝ շրջապատին հետ հաշտ, որովհետեւ մարդու շրջապատը մեծ դեր ունի: Եթէ ընկերները անոր հետ հաշտ չըլլան ու անընդհատ ծաղրեն գայն կամ չվստահին անոր, այդ անձը պիտի ըլլայ ամչկոտ ու տխուր, լուռ պիտի մնայ եւ պիտի քաշուի որեւէ նիւթի մասին արտայայտուելէ, որպէսզի չենթարկուի շրջապատի ծաղրանքին: Այս մէկը, անշուշտ, վատ երեւոյթ մըն է եւ կրնայ պատճառ ըլլալ, որ մարդիկ

կորսնցնեն իրենց ինքնավստահութիւնը ու չկարենան պաշտպանել իրենց արդար իրաւունքը:

Ես շատ ամչկոտ էի, սակայն երբ միացայ Թատերական Միաւորին եւ սկսայ թատերգութիւններու մասնակցիլ ու դասընթացներու հետեւիլ, ամչկոտութենէն ձեռքազատեցայ: Կրնամ ըսել, որ նախասիրութիւններու հետեւիլ եւ լաւ շրջապատ գտնելը կրնան օգնել մեր ինքնավստահութիւնը զօրացնելու: Հիմա ես համարձակ անձ մըն եմ եւ չեմ քաշուիր իրաւունքներս պաշտպանելէ:

Ազգային Զարէն Եփփէ Ծննդարան
Ժ. Կարօ

ջացրել նաւթ արտահանող երկրների համար, որոնք ոչ միայն տնտեսական լուրջ կորուստներ են կրել, այլ, նաեւ, կանգնել են նաւթի եւ նախաձեռնական կախանջարկի պահեստաւորման խնդրի առջեւ:

Բացառութիւն չէ նաեւ Իրանը, որի նաւթի եւ նախաձեռնական արտահանման ծաւալներն առանց այն էլ նուազագոյնի էին իջել ԱՄՆ պատժամիջոցների արդիւնքում:

Նման պայմաններում նախաձեռնական արտահանումը Վենեզուելա ոչ միայն կարող է մասնակիօրէն լուծել դրա պահեստաւորման խնդիրը, այլեւ կարող է որոշակի եկամուտի աղբիւր դառնալ Իրանի համար, որի կաթուածահար տնտեսութիւնն այս օրերին յայտնուել է չափազանց բարդ պայմաններում, ինչը կարող է ընկերային-քաղաքական լրջագոյն հետեւանքներ ունենալ երկրի եւ համակարգի համար:

Զմոռանալք, որ Իրանը եւ Վենեզուելան երկուսն էլ մեծապէս տուժում են ԱՄՆ-ի ընդհանուր պատժամիջոցներից:

Վենեզուելայի նախարարիւնաբերութեան եւ մատակարարման համակարգերը բազմաթիւ թերութիւններ ունեն, որոնք կարող են կարգաւորել իրանցի բարձր որակաւորում ունեցող մասնագետները:

Միւս կողմից ԱՄՆ-ը ձգտում է գրոյականի հասցնել արտաքին աշխարհի հետ Իրանի առեւտրատնտեսական յարաբերությունները (ինչը, պէտք է խոստովանենք, որ մեծ հաշուով ստացուել է), իսկ Թեհրանը փորձում է ելքեր գտնել ստեղծուած փակուղային իրավիճակից: Այնպէս, որ երկկողմ յարաբերությունների ամրապնդումը եւ անխափան ընթացքը կենսական նշանակութիւն ունին թէ՛ Իրանի, թէ՛ Վենեզուելայի համար:

Ներկայ դրութեամբ այս յարաբերությունները կարող են ժամանակաւոր փրկօղակի դեր կատարել երկու երկրների չափազանց տկարացած եւ ճգնաժամային տնտեսութիւնների համար, դառնալով ցաւազրկող միջոց, որը կարող է թմրեցնել Թեհրանի եւ Քարաքապի տնտեսութիւնների բողբոջած ջիղերը, նրանց որոշակի ռազմավարութեան հնարավորութիւն ընձեռնելով:


Հենց այս հանգամանքն էլ խոստանում է Քարիպեան ծովը վերածել թե՛ կետի, որտեղ կարող են բախուել երեք երկրների՝ մի կողմից՝ Իրանի եւ Վենեզուելայի, իսկ միւս կողմից՝ ԱՄՆ-ի շահերը, եթէ, ի հարկէ, Ուաշինգթոնը վճարական լինի իր սպառնալիքները խօսքից գործի վերածելու գործում:

ԲԱՌԵՐ, ԲԱՌԵՐ, ԲԱՌԵՐ(1)

1. Օրական-օրեկան, ամսական-ամսեկան... տարեկան

Արեւմտահայերենը անցնող հարիւրամեակին շատ օգտուած է արեւելահայերենի բառապաշարէն, յատկապէս նորարարութեանց տեսակետէ, եւ այդպէս ալ պէտք է ըլլար: Սակայն արեւելահայերենը փորձանքներ ալ բերած է մեր գլխուն մասնաւորաբար իր ռուսաբանութիւններով, ինչպէս նաեւ կարգ մը մերժելի ոճերով ու կառոյցներով, որոնք ռամիկէն կ'անցնին գրաւոր լեզուին ու անկէ ալ կ'արտածուին սփիւռք, ուր միշտ հիւրընկալ գիրկեր կը գտնեն անոնք: Այսպիսիներէն են՝ **օրեկան** եւ **ամսեկան** կոչուածները:

Ճիշդ ձեւերը անշուշտ **օրական** եւ **ամսական** են: Ուրկէ՞ եւ ինչպէ՞ս բուսան այս մերժելի ձեւերը:



Օրեկան եւ **ամսեկան** ըսողները գիտակցաբար կամ ենթագիտակցաբար կ'ազդուին **տարեկան** բառէն:

Ի՞նչ կ'ըսէ օրեկանը:

Օր եւ **ամիս** բառերը իրենց յաջորդող արմատին կամ ածանցին կը միանան «**ա**» ձայնաւորով, որ հայերէնի ընդհանրական յօդակապին է, որով կը կազմուին բազմահազար ածանցաւոր ու բարդ բառեր. այսպէս՝

օր+ա+կան=օրական

ամիս+ա+կան=ամսական

Ասոնց օրինակով՝ **օրապահիկ, օրագրութիւն, օրաթերթ, օրակարգ, ամսագրութիւն, ամսաթոշակ, ամսավարձ, ամսավերջ, ամսավճար...**

Տարի բառը ունի առանձնայատկութիւն մը. ան կը պատկանի բառերու այն խումբին, որոնք կը վերջանան «**ի**» ձայնաւորով: Արդ, այս ձայնաւորը հանդիպելով, **ա** յօդակապին, կը ձուլուի անոր հետ ու այդ ձուլումէն կը յառաջանայ «**ե**» ձայնաւորը. ահա այսպէս՝

տարի+ա+կան=տարեկան (**ի+ա>ե**)

Այս նոյն ձուլումը տեղի կ'ունենայ, ուրեմն, ամէն անգամ որ բարդ բառին առաջին արմատը կը վերջանայ **ի**-ով. օրինակ՝ այգի+ա+պան=այգեպան, ապակի+ա+գործ=ապակեգործ, դափնի+ա+պսակ=դափնեպսակ, ոսկի+ա+գոյն =ոսկեգոյն, որդի+ա+կորոյս=որդեկորոյս, ուղի+ա+ծիր=ուղեծիր եւ այլն:

Ուրեմն լա՛ւ հասկնանք. այս վերջիններուն մէջ երեւցող **ե** ձայնաւորը անկախ յօդակապ մը չէ, այլ **ի** ձայնաւորին եւ **ա** յօդակապին գումարն է, ձուլումն է:

2. Պէտք է գիտնալ, սակայն, որ հայերէնը ունի «**ե**» լիարժէք յօդակապ մըն ալ, որ հանդէս կու գայ քանի մը արմատներու հետ. այսպէս՝

- այց.- այցետոմս
- արժ.- արժեգին, արժեթուղթ, արժեչափ
- բաժին.- բաժնեգին, բաժնեթուղթ, բաժնեմաս, բաժնետոմս
- դպիր.- դպրեվանք
- խաբ.- խաբեբայ
- ծաղիկ.- ծաղկեպսակ, ծաղկեփունջ
- հաշիւ.- հաշուեյարդար, հաշուենկատ, հաշուեցոյց
- քար.- քարետախտակ

Ասոնցմէ ոմանք կրնան «**ա**» յօդակապով ալ հանդէս գալ. օրինակ՝ **այցագին, այցավճար, դպրատուն, դպրանոց, ծաղկամշակ, ծաղկաքաղ, ծաղկակաղամբ, հաշուակալ, հաշուապահ, հաշուատետր, քարակոփ, քարահանք** եւ այլն:

Ա եւ **ե** յօդակապերու թուական համեմատութիւնը կը թելադրէ, որ շփոթելի պարագաները կազմենք միշտ «**ա**» յօդակապով. օրինակ՝ **այցագիր** (visa) բառը նոր ստեղծուած է, եւ այսպէս ալ պէտք է գրել գայն, սակայն ցաւալի է տեսնել, որ ոմանք կը գրեն **այցեգիր**:

Արծիւ բառը անցեալին **արծուի** էր եւ առ այդ կու տար արծուերոյն, արծուեքիթ, արծուեքիթ, քանի ներկայիս **արծիւ** է բառս, ուրեմն պարտիքը գրել արծուաբոյն, արծուաքիթ, արծուաքիթ:


3. Ունինք վերջապէս բառերու խումբ մը, որոնք մնայուն շփոթի առարկայ են:

Գրել	Չգրել
գլխաբաց	գլխեբաց
դարավերջ	դարեվերջ
դարաւոր (դար+ա+ւոր)	դարեւոր
թաղակից	թաղեկից
միջնամատ (միջին+ա+մատ)	միջնեմատ
շլապինդ	շլեպինդ
շլաբաց	շլեբաց
պոլսաբնակ	պոլսեբնակ

1. **Գլխեբաց**. - Դ. Վարուժան, «Յունիք կը ժողովմ»։ 2. **Դարեվերջ**. - Ռաֆֆի «Խենթը»։ 3. **Դարեւոր**. - Ռ. Պատկանեան, «Արաքսի արտասուքը», եւ Գրիգոր Չոփրապ, «Ոչ-կաթողիկէ»։ 4. **Թաղեցի** կազմուած է **թաղ** եւ **եցի** բաղադրիչներով։ 5. **Չլեբաց**. - Դ. Վարուժան, «Ո՛ր Տալիդա» (եւ ինչ փոյթ որ դուն աղջիկ մ'ես **չլեբաց**, որ բանուորներ կ'ընդունի)։ 6. **Պոլսեբնակ**. - Վահան Թեքեան, «Կեսարիա»։

ՀԱՅՐԱՊԵՏԻՆ «THE ARMENIAN CHURCH» ԳԻՐՔԸ ԼՈՅՍ ՏԵՍԱԲ ԱՐԱԲԵՐԷՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԵԱՄԲ

Վերջին տարիներուն, հանրութեան տրամադրութեան տակ կը գըտնուի դիրին ընթեռնելի, պարզ լեզուով ու ամփոփ, եւ յատկապէս երիտասարդութեան դիրամատչելի, սակայն միաժամանակ համապարփակ կերպով գրուած Յայ Եկեղեցւոյ պատմութիւնը՝ շնորհիւ ՆՍՕՏՏ Արամ Ա. Վեհափառ Յայրապետին, որ գրուած է անգլերէն լեզուով՝ «The Armenian Church» եւ ցարդ թարգմանուած է երեք լեզուներու՝ ֆրանսերէնի, ռուսերէնի եւ պարսկերէնի:



Արդարեւ, ուրախութեամբ կ'ուզենք յայտնել, որ վերջերս Վեհափառ Յայրապետին վերոյիշեալ գիրքին արաբերէն թարգմանութիւնը եւս հրատարակուեցաւ Անթիլիասի Մայրավանքի տպարանէն, եւ այսպիսով գիրքը տրամադրելի է 5 լեզուներով (անգլերէն, ֆրանսերէն, արաբերէն, ռուսերէն եւ պարսկերէն): Թարգմանական ամբողջական ու աստուածաբանական բառամթերքով լի մասնագիտական աշխատութիւնը կատարած է Յալէպի ազգայիններէն դոկտ. Յուրի Ազեգեանը:

Այս առիթով նաեւ յայտնենք, որ Յայրապետին գիրքին գերմաներէն ու յունարէն թարգմանութիւնները պատրաստ են եւ շուտով պիտի լոյս տեսնեն:

«Գանձասար» կը շնորհաւորէ հրապարակագիր, թարգմանիչ դոկտ. Յուրի Ազեգեանը յոյժ կարեւոր այս գիրքին արաբերէն թարգմանութեան լոյս ընծայման առիթով, մաղթելով ստեղծագործական շարունակական վերելք:

ՎԱՍՏԱԿԱՆՍ...

Սկիզբ՝ էջ 12

տարիներ ետք, տիրապետեց խաղին եւ շնորհիւ ճորճիկին եւ Լեւոնին գեղեցիկ կուլերուն տպաւորիչ յաղթանակ մը արձանագրեց:

4.- ՅՄԸՄ ընդդէմ Սուտանի ախոյեան «Ալ Մարիխ» խումբին (1-1) արդիւնքով, կետը նշանակեց խմբապետ եղբ. Լեւոն Ալթունեան:

5.- ՅՄԸՄ-«Ռասիկ» խառն խումբը ընդդէմ Եգիպտոսի ախոյեան «Ալ Իթթիհատ Ալըքանտարի»ի (0-0) արդիւնքով 1966-ի ամրան:

6.- ՅՄԸՄ ընդդէմ Եգիպտոսի «Ալ Օլումբի Ալըքանտարի» խումբին (0-0) արդիւնքով:

ՅՄԸՄ Յալէպի եւ Լիբանանի մէջ բազմաթիւ մրցումներ կատարեց եւ պատուաբեր արդիւնքներ արձանագրեց, բաղդատաբար միւս՝ արեւելեան Եւրոպայի եւ Սովետական Խորհրդային Միութեան խումբերուն:

1970-ի Յոկտեմբեր 16-ին, 27 տարեկանիս, վերջնականապէս դադարեցայ խաղալէ անձնական պատճառներով եւ որոշեցի վերջ տալ մարզական կեանքիս:

«Գ.»- Ֆութպոլի մարզիկ ըլլալով մեկտեղ, միութենէն ներս այլ պատասխանատու պարտականութիւններ ստանձնած եք: Կարելի՞ է այդ մասին ես խօսիլ:

Ճ.Ռ. - Լիբանանէն ներս ունեցայ միութենական համեստ գործունեութիւն: Տարիներ մաս կազմեցի ՅՄԸՄ-ի Պուրճ Յամուտի Մասնաճիւղի Վարչութեան, որպէս ատենադպիր, ապա ատենապետ, երեք տարի յաջորդաբար: Երկու շրջան եղած եմ ՅՄԸՄ-ի Լիբանանի Շրջանային Վարչութեան դիւանի անդամ, նաեւ մաս կազմած անոր քաղաքական եւ դաստիարակչական

յանձնախումբերուն:

ՅՄԸՄ-ի Կեդրոնական Վարչութեան որոշումով՝ Յորդանանի Ամման մայրաքաղաք ուղարկուեցայ յատուկ առաքելութեամբ եւ հոն Յայոց Յեղասպանութեան ոգեկոչման հաւաքին, որպէս գլխաւոր պատգամախօս արտասանեցի ՅՄԸՄ-ի խօսքը:

Նոյն տարին 1992-ին դարձեալ ՅՄԸՄ-ի Կեդրոնական Վարչութեան թելադրանքով, յատուկ առաքելութեամբ Սուրիա մեկնեցայ, որպէսզի Կ. Վարչութեան «Մարզիկ» պաշտօնաթերթին Սուրիա մուտք գործելու արտօնութիւնը ապահովեմ:

«Գ.»- Որպէս վաստակաշատ միութենական եղբայր եւ Ազգ. վարժարաններու մէջ ծառայած կրթական մշակ, ի՞նչ կը թելադրէք ներկայ սերունդին եւ ծնողներուն:

Ճ.Ռ. - Յայ ծնողքը պէտք է կուռ հաւատք ունենայ ՅՄԸՄ-ին հանդէպ, անոր սկզբունքներուն, ծրագրին, նպատակներուն, «Բարձրացի՛ր, Բարձրացո՛ւր» նշանաբանին եւ անելի քան հարիւրամեայ հարուստ պատմութեան: Իր գաւկի ձեռքէն բռնած գայն պէտք է առաջնորդէ ՅՄԸՄ-ի հսկայ դարբնոց:

Յայ ծնողքը նաեւ պէտք է հաւատայ ՅՄԸՄ-ի սրբազան առաքելութեան եւ անոր կատարած կենսական ու կարեւոր դերին մեր ազգային կեանքին մէջ, որպէս մարդակերտ եւ հայակերտ կազմակերպութիւն:

Սիրելի՛ հայ ծնողներ, վստահեցե՛ք ձեր գաւակները ՅՄԸՄ-ի հսկայ կազմակերպութեան, եւ ան կ'երաշխաւորէ պատրաստել իսկական մարդը, հաւատարիմ քաղաքացի եւ յանձնառու գիտակից հայ մարդը:

Այս է եղած ՅՄԸՄ-ը ու այդպէս պիտի շարունակէ մնալ:

(Շար. 3 եւ վերջ)

Մահուան Բառասուներին Առիթով

ՅԻՇԱՏԱԿԸ ԱՆԹԱՌԱՄ ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԴՊՐՈՑՆԵՐՈՒ ԱՆՉՈՒԳԱԿԱՆ ՆՈՒԻՐԵԱԼԻՆ

Քառասուն օր առաջ, դարանակալ մահը իր ընտանիքին, հարազատներին եւ մեզ մե առյաւետ բաժնեց պատուական հայուհի մը, Բերիոյ Դայոց Թեմի Ծառայութեան Շքանշանակիր տիկին Նազելի Ազեգեանը, ծնեալ՝ Նարինեան:

Բազմաթիւ ցաւակցագիրներուն մէջ յիշուած «Անուշիկ Դարսը...», «Ազ-նուափայլ Տիկին Նազելի...», «Նուիրեալ Դայուհի...», «Եկեղեցաւորու Նազելի Ազեգեանը Գործիչը...», «Առաքինագարդ Կինն ու Մայրը...», «Բարեկիրտ ու Բարեսէր Նազելի...», «Երջանկութիւն Սփռող Մամա՛ն...», եւ տակաւին շարք մը հոգեւորականներ, որոնք իսկապէս պերճաբար արտայայտիչը կը հանդիսանան հանգուցեալին պայծառ դիմագիծին, մարդկային ազնուագոյն արժանիքներուն եւ ապրած քրիստոնեակայելի ու հայապայելի վաստակաբեռն կեանքին:

Հանգուցեալ Նազելի Ազեգեան ծնած էր Ալեքսանտրէթ, 1931-ին, եւ մինչեւ վերջին շունչը կապուած մնաց իր իսկ բառերով՝ «գեղատեսիլ ծննդավայր»ին եւ Միջերկրականի կապոյտ ջուրերուն: Դուստրն էր Ալեքսանտրէթի հայ համայնքի ակաւաւոր դէմքերէն, պետական-կառավարական շրջանակներէ ներս մեծ հեղինակութիւն վայելող, ազգային գործիչ Օննիկ Յակոբի Նարինեանի, իր կարգին իզմիրցի մեծանուն ընտանիքի մը գաւազն, որ գործի բերումով իզմիրէն գաղթած եւ հատաստուած էր Ալեքսանտրէթ:



Հանգուցեալը յաճախած էր Ալեքսանտրէթի ԶԲԸՄ-ի Նուապարեան վարժարանը: Ապա 1939-ին, Ֆրանսայի մեղսակցութեամբ Ալեքսանտրէթի Սանճաքին Թուրքիոյ կցուով, ընտանեօք Թարթուսի ճամբով տեղափոխուած էին Պէյրութ - Լիբանան:

Մինչ այդ, Թարթուսի հայ գաղթականներու վրանաքաղաքներուն մէջ, բոլորին եւ յատկապէս հանգուցեալին համար Նախախնամական Ներկայութիւն մը հանդիսացած էր Չարեհ Աբեղայ Փայասլեան, հետագային Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս, այդ օրերուն գործուղուած էր Կաթողիկոսութեան կողմէ, օգտակար դառնալու գաղթականներուն: Չաւակներուն վկայութեամբ, հանգուցեալ Նազելի Ազեգեան «Այդպէս էր Վեհափառը» կ'ըսեր եւ կ'աւարտէր ամենօրեայ աւանդոյթ դարձած իր յուշապատումները, ուր Չարեհ Վեհափառը միշտ տիրական Ներկայութիւն էր, շնչող ու կենդանի, պարզապէս ժամանակը չէր յաջողած ստուեր ձգել անոր պատմակերտ անձին ու անմտ յիշատակին վրայ, մանաւանդ որ անոր խօսքերով՝ «Վեհափառը կը շարունակէր իր յանկուցիչ բարութիւնն երանգ մը միահիւսել մեր սրտերուն, պայծառատես իմաստութիւնն ու յիշք մը միահառնել մեր մտքերուն, իր լուսաճաճանչ ոգին շող մը շաղախել մեր աչքերու ցոլքին, խորունկ հաւատքէն հատիկ մը սերմանել մեր հոգիներուն մէջ, անպարագիծ երթեանն եւ հոգեկան արիւթեանն կայծի մը ցօղել մեր կամքին ու կորովին մէջ...»:

Հայրը՝ Օննիկ Յակոբի Նարինեան, շուտափոյթ կերպով Ալեքսանտրէթ վերադառնալու մեծ յոյսերով, կարճ ժամանակ մը ետք իր ընտանիքով Պէյրութէն անցած էր Սուրիա եւ հաստատուած Զալէպ, ուր պատակի Նազելի յաճախած էր Զալէպի Կիլիկեան վարժարանը, եւ Նախակրթարանի բաժինը աւարտելէն ետք, հետեւած էր հայերէնի, ֆրանսերէնի եւ երաժշտութեան անձնական դասերու, միաժամանակ տակաւ առ տակաւ կազմաւորուելով անգիջող հայրենասէր ու ազգասէր հօրը ոգեշունչ կերպարով:

Չուգահեռաբար, հանգուցեալը յաճախած էր Հայաստանեայց Եկեղեցւոյ Կիրակնօրեայ Դպրոցներու Զալէպի Կեդրոն Բաժինը, որ կը գործէր Սրբոց Քառասնից Մանկանց Մայր Եկեղեցւոյ շրջափակէն ներս: Կիրակնօրեայ Դպրոցին ընթացքը աւարտելէն վերջ, դարձած էր ուսուցչուհի՝ երկար տարիներ անվերապահօրէն ծառայելով այս «Նուիրական Յարկ»ին:

1949-ին ամուսնացած էր Ալեքսան Ազեգեանի հետ, ընտանեկան ջերմ բոյնը բախտաւորուած էր չորս խոստմնալից գաւակներով՝ Թամար, Զուրի, Գեորգ եւ Խաժակ, չորսն ալ վկայեալ Կիրակնօրեայ Դպրոցի Կեդրոն Բաժինէն եւ համալսարանական բարձրագոյն կրթութեանց հետեւած, աստուածատուր շնորհները գարգացուցած, ապա իրենց հօրը հայրական հովանաւորութեամբ եւ մօրը բարի հետքերով ընթանալով՝ Նուիրուած են մեր եկեղեցւոյ ու ազգին ծառայութեան:

Հանգուցեալ Տիկին Նազելի Ազեգեան՝ օինակելի հարսը, տիպար կինն ու մայրը, սիրասուն մեծ մայրը, քաղցր հարազատը, ընտանեկան իր բոլոր պարտաւորութիւններուն կողքին, կապերը երբեք չէր խզած Կիրակնօրեայ Դպրոցին հետ, որ իր ծառայական վաստակին շրջագիծէն ներս յատուկ տեղ կը գրաւէ: Ան Կիրակնօրեայ Դպրոցներուն տուած էր աշխատանքային յաճախակի այցելութիւններ, կատարած էր Նոր Տարուայ բովանդակալից բարոյախօսութիւններ, մեծ թիւով հայ մանուկներ ուղղելով դէպի այս աստուածահաճոյ հաստատութիւնը, մանաւանդ որ 1977-ին ընտրուած էր

ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

Դուստր Զուրի Ազեգեան
Տեր եւ Տիկին Չաւեն - Թամար Տեր Գրիգորեան եւ
Չաւակունք

Տիկին Անի Ազեգեան եւ Չաւակունք
Տեր եւ Տիկին Տոքթ. Խաժակ - Ալլա Ազեգեան եւ Չաւակունք
Իրենց խորին շնորհակալութիւնը կը յայտնեն՝
ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՅՑ ԳԱՅԱԿԱԼ
ՆՍՕՏՏ ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ

Բերիոյ Դայոց Թեմի Առաջնորդ
ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ՄԱՍԻՍ ԵՊՍ. ՉՕՊՈՒԵԱՆԻՆ

Թեմի Ազգ. Երսփոխանական Ժողովին, Զահանայից Դասուն, Ազգ. Վարչութեան, ազգային մարմիններուն, ՀԵԿ Դպրոցներու, ՍՕԽ-ի եւ Համագայիկի մեծ ընտանիքներուն, եւ բոլոր անոնց, որոնք անձամբ, ծաղկեպսակով, հեռաձայնով, համացանցով եւ ցաւակցական գիրքով մասնակից դարձան իրենց մօր, մեծ մօր եւ հարազատին,

Բերիոյ Դայոց Թեմի Ծառայութեան Շքանշանակիր

Հանգուցեալ
ՆԱՉԵԼԻ ԱՉԵՉԵԱՆԻ
(Ծնեալ՝ Նարինեան)

մահուան սուգին

Հանգուցեալին մահուան քառասունեակի Հոգեհանգստեան Պաշտօնը տեղի պիտի ունենայ Կիրակի, 24 Մայիս 2020-ին, Ս. Աստուածածին Եկեղեցւոյ մէջ, առաւօտեան ժամը 10:30-ին, յաւարտ Ս. Պատարագին:

Յիշատակն արդարոց օրհնութեամբ եղիցի:

Բերիոյ Դայոց Թեմի Կրօնական Դաստիարակութեան Խորհուրդի անդամ, եւ որպէս կազմին գոյքապահը՝ անընդմիջաբար ամբողջ 27 տարի բժախնորութեամբ եւ մեծ Նուիրումով անձնուիրաբար ծառայած էր՝ ի խընդիր Թեմի տարածքին Զրիստոնեական Դաստիարակութեան գարգացման եւ Կիրակնօրեայ Դպրոցներու բարգաւաճման, որոնք այդ շրջանին նշանակալից վերելք արձանագրած էին, իր անսակարկ ծառայութեան համագումարը հասցնելով 50 տարիներու:

Հանգուցեալին համար Երջանկայիշատակ հայրապետներու սրբատառ կոնդակով հիմնուած Կիրակնօրեայ Դպրոցը կը հանդիսանար քրիստոնեական դաստիարակութեան այն անմատոյց եւ անփոխարինելի բերքը, ուր մեր մանուկները կը ճանչնան աւետարանական ճշմարտութիւնները, հաղորդակից կը դառնան մեր բուրումնաւետ աղօթքներուն ու շարականներուն, կը գիտակցին Հայ Եկեղեցւոյ առաքելութեան ու մեր ազգային ինքնութեան, եւ մանաւանդ կը սորվին գիրար սիրելի ու անմաքտորդ Նուիրումով ծառայել, կեանքի կոչելով աղօթասաց Վարդապետին խօսքերը:

«Թող ըլլանք տուողներ առանց փոխարժէքը հաշուելու, ծառայողներ՝ առանց հանգիստ փնտռելու...»:

Հանգուցեալին ծառայական վաստակին մաս կը կազմէր նաեւ երկար տարիներու ծառայութիւնը՝ Կիլիկեան Կրթական Հաստատութեան Տիկնանց Յանձնախումբին մէջ, գօրակցելու եւ նեցուկ կանգնելու Կիլիկեան վարժարանին:

1989-ին անդամակցած էր Սուրիահայ Օգնութեան Խաչին (ՍՕԽ), գործուն անդամ չէր եղած, սակայն մօտէն հետեւած եւ անվերապահօրէն քաջալերած էր կանացի այս հզօր կազմակերպութեան բոլոր գործունեութիւնները:

Առ ի գնահատանք իր բազմաբեղուն ծառայութիւններուն, մասնաւորապէս Կիրակնօրեայ Դպրոցներու բնագաւառէն ներս, օրուան Թեմի Ազգային Վարչութեան որոշումով, եւ ձեռամբ օրուան Առաջնորդ Շահան Արք. Սարգիսեանի, 10 Յունուար 2018-ին, պարգեւատրուած էր Բերիոյ Դայոց Թեմի Ծառայութեան Շքանշանով:

Հանգուցեալ Նազելի Ազեգեան, իր կեանքին ամբողջ ընթացքին ակաւալուր խղճի ձայնին, մերժեց չարն ու չարիքը, եւ իբրեւ ջերմեանը քրիստոնեայ, անգիջող հայրենասէր, աւանդապահ, բարի, ազնիւ ու կենսալից անձնաւորութիւն, ապրեցաւ ու գործեց համեստօրէն, խոնարհութեամբ, կեանքի դժուարութիւնները դիմագրաւեց վեհափառ լռութեամբ, համբերութեամբ, Նոյնիսկ ժպիտով, «Շրջապատին Երջանկութիւն Սփռելով...», եւ Ազեգեան ընտանիքը երբ 18 Օգոստոս 2018-ին՝ խորագոյն դժբախտութիւնը ունեցաւ վաղախաւորէն կորսնցնելու իր երրորդ գաւակը՝ Գեորգը, մեծ կորուստն ու մեծ ցաւը թեւ խնայուեցան հանգուցեալէն, սակայն մայրական սիրտը զգաց եւ մղկտաց՝ դարձեալ անխօս կերպով, լռութեամբ...:

Տիկին Նազելի Ազեգեան մահացաւ 24 Ապրիլ 2020-ին, իր ետին ձգելով հայ կնոջ եւ հայ մօր վայել պատկառելի աւանդ մը եւ ազգային ծառայութեան սքանչելի վաստակ մը:

Յիշատակը Անթառամ Կիրակնօրեայ Դպրոցներու այս անգուգական Նուիրեալին:

Յիշատակն արդարոց օրհնութեամբ եղիցի:

ԻՆՉ ԿՐՍԵՆ ԱՍՏՂԵՐԸ



ԽՈՅ

Ձեր կարեւոր գործերը մի՛ յետաձգեք: Կրկնապատկի եկամուտ ունենալ այս շաբաթ, ուստի տնտեսող եղեք ու մի՛ սպառեք ձեր ունեցածը:



ՏՈՒԼ

Ձեր շրջապատէն մեծ ակնկալիքներ մի՛ ունենաց: Ձեզի նախապէս օգնողներն անգամ այս օրերուն կրկան կարելիութիւն չունենալ նեցուկ կանգնելու ձեզի:



ԵՐԿՈՒՐԵԱԿ

Դուք յաճախ կը գերազնահատեք ձեր ճիգերը: Այս մէկը կրկայ յուսախաբութեան մատնել ձեզ, յատկապէս երբ չկարենաք յաղթահարել որոշ դժուարութիւններ:



ԽԵՑՁԵՏԻՆ

Այս շաբաթ լարուած էք: Կը դժուարանաք լեզու գտնել ձեր շրջապատին հետ: Ձեր մտազէ՛ք վիճաբանութիւններ:



ԱՌԻՇ

Լուսարձակի տակ էք, ձեզ յաճախ կը քննադատեն: Փորձեցէ՛ք հանգըստութեամբ ընդունիլ քննադատութիւնները ու կատարելագործել ձեր աշխատանքը:



ԿՈՅՍ

Կարելիութիւն կ'ունենաք ձեր աշխատանքի գարգացման մասին օգտակար տեղեկութիւններ ստանալու եւ նոր ոճ կիրարկելու՝ ներկայ պայմաններուն յարմարելով:



ԿՇԻՈՔ

Փորձեցէ՛ք խուսափիլ յուզումնալից հանդիպումներէ: Դուք անհանգիստ շրջան մը կ'անցընէք, սակայն շարք մը կարեւոր հարցեր պիտի կարենաք լուծել:



ԿԱՐԻՃ

Ձեր գործերը շատ լաւ պիտի ընթանան այս շաբաթ: Առողջական հարցեր կրկան յառաջանալ, հետեւեցէ՛ք բժիշկին թելադրանքներուն:



ԱՂԵՂԱՄՈՐ

Բարենպաստ շաբաթ է ընկերային յարաբերութիւններու բարելաման համար:



ԱՅՅԵՂՋԻՐ

Արձակուրդի շրջան է: Կարելիութիւն ունիք զբաղելու տնային գործերով, օգնելու ձեր ընտանիքի անդամներուն եւ մտերմիկ յարաբերութիւններ հաստատելու անոնց հետ:



ՋՐՂՈՍ

Այս շաբաթ շատ սուր ոճով կը քննադատեք ձեր գործընկերները, երբեմն կը վիրաւորեք զիրենք, կը փճացնէք ձեր յարաբերութիւնները անոնց հետ:



ՁՈՒԿ

Տնտեսական պայմանները որքան ալ վատ ըլլան, փորձեցէ՛ք պահպանել լաւատեսութիւնը, որպէսզի կարենաք յաղթահարել դժուարութիւնները:



ՀԱՄԲԱՐՁՄԱՆ ՏՕՆԻՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՒԱՆԴՈՅԹՆԵՐԸ



Յիսուս Զրիստոսի Համբարձման տօնը Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին կը յիշատակէ Ե. դարէն ի վեր: Տերունի այս տօնը հարուստ է ոչ միայն եկեղեցական, այլ նաեւ ժողովրդական ծեսերով:

Ժողովրդական ավանդույթներուն համաձայն, Համբարձման տօնակատարութիւնները կ'ընթանային քանի մը օր շարունակ: Տօնի հիմնական սովորութիւնն էին ծաղկահաւաքը, վիճակաձգումը, ուխտագնացութիւնը, ծիսական ուտեստը: Պատահական չէ, որ Համբարձումէն բացի տօնը ունի նաեւ այլ անուանումներ, որոնք կապուած են ծիսական այս բաղադրիչներուն հետ, ինչպէս՝ Ծաղկաքաղի օր, Ծաղիկ գովել, Վիճակի օր, Ջան Կիւլումի օր, Ճակատագրի տօն, Ծաղկամօր տօն, Կաթ ուտելու օր, Կաթնապուրի տօն եւ այլն:

Տօնին «Վիճակ» անուանումը առնչուած է սուրբգրային դրուագի մը հետ, որուն համաձայն Յիսուսի Համբարձումէն ետք, առաքելները եւ անոր հետեւորդները մատուցէին Յուդայի փոխարէն վիճակահանութեամբ կ'ընտրէին Մատաթիան՝ որպէս տասներկորդ առաքել: Վիճակահանութիւն կը կատարուի նաեւ ժողովրդական ծիսակարգով, որուն զխաւոր մասնակիցները աղջիկներ կ'ըլլան: Ըստ ավանդույթի, աղջիկներուն խումբը Համբարձման նախորդող Չորեքշաբթուան վաղ առաւօտեան, մինչեւ արեգակին ծագիլը, անխօս կ'երթան դաշտեր, եօթ աղբիւր՝ եօթ բուռ ջուր, հոսող առուէն՝ եօթ քար, եօթ տեսակ ծառէ՝ եօթ տերեւ, եօթ տեսակ ծաղիկ կը հաւաքեն եւ կը լեցնեն փարչի մը մէջ: Աղջիկները նաեւ մեծ փունջ մը կը կազմեն եւ կը դնեն կճուճի մէջ: Ծաղկահաւաքի ընթացքին տղոց խումբերը կը հետեւին աղջիկներուն՝ փորձելով սրամիտ խօսքերով գրաւել աղջիկներուն ուշադրութիւնը եւ խախտել լռութիւնը: Սակայն աղջիկները պէտք է լուռ մնային, մինչեւ իրենց առաքելութեան ավարտը՝ վիճակի փարչին պատրաստութիւնը: Աստղերը երեւալուն պէս վիճակի կճուճը կը պահէին թուփերուն տակ, կամ կը պահէին աղջիկներէն մէկուն տան մէջ ու կը հսկէին անոր, որպէսզի տղաքը չփախցնեն զայն: Հինգշաբթի՝ տօնին հիմնական օրը, աղջիկները երգելով կը շրջին տունէ տուն, ծաղկեփունջեր եւ ջուր կը նուիրեն, իսկ տանտիրիկները անոնց կու տային իւղ, հաւկիթ, այլ սննդամթերք եւ մէկական իր կը նետեն վիճակի փարչին մէջ: Աղջիկներուն նուիրած ջուրն ալ կը լեցնեն խնոցներու մէջ՝ առատ կարագ ունենալու ակնկալիքով, իսկ Նոյն ջուրը՝ հաւատքով կը սրկէին հիւանդներուն վրայ՝ բուժման ակնկալիքով:

Կեսօրին կը սկսէր վիճակաձգութիւնը: Աղջիկներու ամենակրտսերին հարսի հագուստ կը հագցնէին: Ջան Կիւլումի երգէն ետք, անոր կը վիճակուէր խորհրդաւոր փարչին մէջէն հանել վիճակահանութեան իրը, որուն տիրոջն ալ կը վերագրուէր երգին ուղերձը՝ բարի բախտ կամ յաջողութիւն: Համբարձման տօնին ընտրող այս արարողութիւնը շատ սիրուած է եւ սպասուած բոլորին կողմէ: Ան միշտ ուղեկցուած կ'ըլլայ ուրախ երգերով ու կատակներով: Վիճակաձգութեան ավարտին Ծաղկամանը կը նուիրուէր եկեղեցւոյ:

Տօնը շարունակուած է նաեւ ուխտավայրերու մէջ: Ազգագրական աղբիւրները՝ ուսումնասիրութիւնները կը վկայեն, որ միջնադարէն մինչեւ մեր օրերը Համբարձման տօնին ժողովուրդը ուխտի կ'երթայ:

Ուխտաւորները Սուրբ Պատարագին մասնակցելէն եւ Տիրոջ հետ իրենց ուխտը նորոգելէն ետք Համբարձման կաթնապուրը կը ճաշակէին: Որոշ բնակավայրերու մէջ Չատիկէն մինչեւ Համբարձում կաթը խնայելու նպատակով կաթնամթերք չէին օգտագործեր: Համբարձման տօնին օրը ուխտավայրերու մէջ կաթնապուր կ'եփէին եւ որպէս մատաղ՝ եօթը տեղ կը բաժնէին զայն, որպէսզի կովերը առատ կաթ ունենային: Կաթնապուրը կը ցանէին արտերու շուրջ, որպէսզի հունձը առատ ըլլար եւ չվնասուէր: Մարդիկ կը հաւատային, որ այն մարդը, որ առաջին անգամ կը ճաշակէր կաթնապուրը, տարուան բախտաւորը կը դառնար:

Ուխտավայրերուն մէջ իսկական տօնախմբութիւն տեղի կ'ունենար՝ երգ ու պարով, խաղով ու նուագով: Համբարձման ուխտագնացութիւնները եւ ծաղկահաւաքները լաւագոյն առիթ կը հանդիսանային երիտասարդներուն ծանօթութեան համար:

Տօնի կարեւոր մաս կը համարուէին նաեւ շնորհաւորական այցելութիւնները: Փոխադարձ այցելութիւններ կու տային յատկապէս նոր նշանուածներուն եւ նորապսակներուն ընտանիքները՝ նուիրելով եւ քաղցրեղէնով լի ափսէներ նուիրելով իրարու:

Դարերէ ի վեր պահպանուած Համբարձման տօնի այս ավանդույթները առիթ թող հանդիսանան հոգեւոր մտորումներու, բարեկամական կապերու վերահաստատման եւ իրարօգնութեան՝ մշտապէս բնութեան բարիքները գնահատելով եւ աստուածատուր պարգեւներուն մեր երախտագիտութիւնը յայտնելով:



Ռաֆֆի Սիկահեան

ՀԱՅԿԱԿԱՆ

ԼԵՆՈՆ ԱՐՈՆԵԱՆ ՊԻՏԻ ՄԱՍՆԱԿՑԻ LINDORES ABBEY RAPID CHALLENGE-Ի ԱՌՑԱՆՑ ՄՐՑԱՇԱՐՔԻՆ

Հայաստանի ճատրակի առաջատար Լենոն Արոնեան պիտի մասնակցի 19 Մայիսին 3 Յունիս կայանալիք արագ ճատրակի Lindores Abbey Rapid Challenge առցանց մրցաշարքին, որուն մրցանակային հիմնադրամը 150 հազար ամերիկեան տոլար է: Այս Magnus Carlsen Chess Tour-ի երկրորդ փուլն է: Առաջին փուլը Magnus Carlsen Invitational-ն էր, որուն մաս չկազմեց Լենոն Արոնեան: Առաջին մրցաշարքի եզրափակիչին աշխարհի ախոյեան, նորվեկացի Մագնուս Կարլսեն յարթեց ամերիկացի Չիկարու Նակամուրային: Երկրորդ մրցաշարքը անհատական է: Լենոն Արոնեանի հետ պայքարին կը մասնակցին Մագնուս Կարլսեն, չինացիներ՝ Դին Լիբեն, Եի Վեյ, Իւ Եանչի, Ռուսիայէն Ալեքսանտր Գրիշչուկ, Սերկեյ Կարյակին եւ Տանիել Տուփուլը, ամերիկացիներ Ուեսլի Սոն եւ Չիկարու Նակամուրա, իրանցի Ալիոնգա Ֆիրուզա, լեհ Յան-Կիշտոֆ Թուրթա:



ՄԻՋԱԶԳԱՅԻՆ

ՍՊԱՆԻՅԱՆ ԱԽՈՅԵԱՆՈՒԹԻՒՆԸ ՍԿՍԵԼՈՒ ԺԱՄԿԵՏԸ ՅՍՏԱԿԱՅՈՒ

Սպանիայի ֆուտբոլի Դաշնութեան Նախագահ Լուիս Բուպիայեսն ու Լա Լիգայի Նախագահ Կաֆիլեր Տեպաս համաձայնութեան հասան պատկաճեց ժառիր համաճարակի հետեւանքով դադարած Սպանիոյ ախոյեանութեան մրցումներու վերսկսելու ժամկետին շուրջ: Մրցաշրջանը պիտի վերսկսի Յունիսին, որուն մրցումները տեղի պիտի ունենայ ամէն օր եւ իւրաքանչիւր խումբ հանգիստ պիտի ընէ միայն 72 ժամ: Այս մանրամասնութիւնները արձանագրեց սպանական AS-ը: Տաքէն պաշտպանուելու համար հանդիպումները տեղի պիտի ունենան Սպանիոյ ժամով 23:00-ին: Առաջնութիւնը պետք է ավարտի 29 Յունիսին, որովհետեւ UEFA-ն մտադիր է 2 Օգոստոսին վերսկսիլ եւրոպական բաժակի մրցաշարքերը:



UEFA-Ն ԹԵԼԱԴՐԵՑ ԵՐՈՊԱՅԻ ԱԽՈՅԵԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԱՄԱՐՏԵԼ ՕԳՈՍՏՈՍԻՆ

UEFA- ի նախագահ Ալեքսանտր Զիվրին յայտարարեց թէ Եւրոպայի երկիրներու ներքին ախոյեանութիւնները ավարտուելու վերջին պայմանաժամն է 1 Օգոստոս: Պատկերասփիւռային կայանի մը հետ հանդիպումի ընթացքին Զիվրին ըսաւ. «Եթէ ներկայ պայմանները շարունակուին, մենք պարտաւոր ենք բոլոր ախոյեանական մրցումները ավարտել միջեւ Օգոստոս, որմէ ետք տեղի պիտի ունենան Եւրոպայի «Չեմփիոնզ Լիկ»-ի եւ «Իւրոփա Լիկ»-ի մրցումները»: Ան իր խօսքին մէջ նաեւ ըսաւ, թէ իւրաքանչիւր դաշնութեան հայեցողութեան կը մնայ ախոյեանութիւնը վերսկսելու որոշումը, բայց իր պատասխանատուութեան վրայ է Եւրոպայի ախոյեանական մրցումներու մասնակից ակումբները որոշելը: Նշեց որ Ֆրանսայի եւ Հոլանտայի դաշնութիւնները դադարած համարեցին իրենց երկիրներու մրցաշարքերը պատկաճեց ժառիրին հետեւանքով:



25 ՅՈՒՆԻՍԻՆ ՊԻՏԻ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԻ ՀԱՄԱՇԵԱՐՅԱՅԻՆ ԿԱՆԱՆՑ ՄՐՑԱՇԱՐՔԻ ՉԻՐԸՆԿԱԼՈՂ ԵՐԿԻՐԸ

Միջազգային ֆուտբոլի Դաշնութիւնը յայտարարեց, որ 25 Յունիսին պիտի ընտրուի համաշխարհային կանանց ախոյեանութեան հիւրընկալ երկիրը: ՖԻՖԱ-ն շրջաբերականին մէջ անդարարածաւ, թէ 25 Յունիսին առցանց միջոցով տեղի պիտի ունենայ միջազգային ֆուտբոլի գերագոյն նիստը, որուն ավարտին պիտի յայտարարուի հիւրընկալ երկիրը: Սոյն մրցաշարքին թեկնածուներն են Պրագիլը, Քոլումպիան, Եւ Ճափոնը, ինչպէս նաեւ միացեալ առաջարկ մը հասած է Աւստրալիայէն եւ Նիւզելանտայէն: Աւելցնենք, որ 2023-ի ախոյեանութեան մաս պիտի կազմեն 32 երկիրներու կանանց հաւաքականները: Նախապէս կը մասնակցելին միայն 24 հաւաքականներ:



ՖԻՐԵՆՏԻՆԱ ԽՈՒՄԲԵՆ ԵՐԵՔ ԽԱՂԱՅՈՂՆԵՐ ՎԱՐԱԿՈՒԵՑԱՆ ՊՍԱԿԱԶԵՐ ԺԱՅՐՈՎ


Իտալիոյ ֆիրենթինա ակումբը իր կայքին միջոցաւ յայտարարեց, որ ֆուտբոլի խումբէն երեք խաղացողներ վարակուած են պատկաճեց ժառիրով: Տեղեկութիւններուն մէջ յիշուեցաւ, որ խաղացողներուն մէջ է ուրուկուելցի խաղացող Մարթեն Բասերսը, որ նախապէս մաս կազմած է Ժիւվէնթոսու եւ Պարսելոնա խումբերուն: Զատերսը 14 օր պիտի մնայ անջատ հսկողութեան տակ, ինչպէս նաեւ մաս պիտի չկազմէ խումբի ուսումնամարզական հաւաքին: Յայտնենք, որ Իտալիոյ մէջ պատկաճեց ժառիրով վարակուողներուն թիւը հասաւ 78457-ի:



Թիւ 8
Աւարտէ խաղը մէկ քայլով «ճերմակ քար»:

	e	q	o	p	թ	յ	ճ	Կ
8						Կ		Ճ
7							Ճ	Կ
6							Կ	Ճ
5					Կ			
4								
3								
2							Ճ	
1								
	a	b	c	d	e	f	g	h

Նախորդ Թիւի Պատասխանն է Ճc3\#
ՀԱՄԱՐՈՒՄԻ ՀԱՏՈՐԱԿԻ ՅՆՃԻՍ.



ՎԱՏՏԱԿԱՆՍ ՉՄԸՄ-ԱՎԱՆ ՃՈՐՃԻԿ ՌԱՍՔԵԼԵՆԵԱՆԻ ՅՈՒՆԵՐԸ ԿԸ ՎԵՐԱԿԵՆԴԱՆԱՆԱՆ

«Գանձասար» առցանց հարցազրույց մը ունեցած էր սուրիահայ վաստակաշատ ֆուտբոլիստ, ՅՄԸՄ-ական ճորճիկ Ռասթելենեանի հետ, որուն առաջին եւ երկրորդ մասերը ներկայացուցած էինք թերթիս Մայիս Ա. եւ Բ. համարներով, ստորեւ՝ վերջին մասը.

«Գանձասար»- Հայկաի մէջ ունեցած էք այլ օգտակար ծառայութիւններ: Եթէ այո, կը խնդրենք որ անոնց եւս անդրադառնաք:

ճորճիկ Ռասթելենեան- 1965-ին, Դամասկոսի մէջ Սուրիոյ ընդհանուր ծխախոտի հաստատութեան

ցիական պատերազմին պատճառաւ, երբ բոլոր դպրոցները միւսէն անորոշ թուական փակուեցան, հարկադրուած ընտանիքիս հետ առժամաբար Հայկաի փոխադրուեցանք: ՅՄԸՄ-ի Շրջանային Վարչութիւնը օգտուելով այս պատեհ առիթէն ինծի առաջարկեց ֆուտբոլի Ա. դասակարգի խումբի մարզումի պարտականութիւնը, փոխան որոշ նիւթական վարձատրութեան: Սիրով ընդունեցի այս վեհ պարտականութիւնը, սակայն մերժեցի նիւթական վարձատրութիւնը, այն համոզումով որ ՅՄԸՄ-ը մեզի համար եղած է տուն, դպրոց ու մեր մէջ խարըս-



ՅՄԸՄ-ի Հայկաի ֆուտբոլի խումբը 1978-ին

ընդհանուր տնօրէնին որոշումով, արհեստավարժ խումբ մը պատրաստելու նախաձեռնեցին: Այդ խումբին մաս կազմելու պատուին արժանացայ երեւակայական ամսաթոշակով: Հայկաի «Աիլի» խումբի խաղացող Ռաւէ Աքքատին ալ նոյն հրաւերը ուղղուեցաւ: Այսպէս Հայկաի միմիայն երկու խաղացողներ մաս կազմեցին այս խումբին: Մէկ ամիս ետք, - որուն ընթացքին մէկ մրցումի մասնակցեցայ եւ լաւ տպավորեցի բոլորը, ի մասնաւորի պատասխանատուները, - Դամասկոսի մէջ բարեկամական մրցումէն առաջ, ՅՄԸՄ-ի օրուան պատասխանատուին թելադրանքով հրաժարեցայ այս խումբէն, եւ խոստում ստացայ լաւ պայմաններով գործի մը ուղղուելու, որը դժբախտաբար չիրականացաւ: Այս մէկը մէջս հսկայ փեկում մը յառաջացուց եւ պատճառ դարձաւ որ չկարողանամ համալսարանական ուսմանս հետեւիլ նիւթական դժուարութեան պատճառով, որովհետեւ ծնողքիս տնտեսական վիճակը ճիշդ այդ օրերուն անակնկալօրէն վատթարացաւ եւ մենք նիւթական տաճնապի մատնուեցանք: Սակայն ես գորաւոր հաւատքով ու լաւատեսութեամբ շարունակեցի կատարել միութենական բոլոր պարտաւորութիւններս եւ առաւելագոյն չափով նպաստեցի ՅՄԸՄ-ի յաջողութիւններուն:

Վարչութեանս թելադրանքին ընդառաջելով կատարեցի Հայկաի ոստիկանութեան ապահովութեան գորանոցի նորակազմ ֆուտբոլիստ խումբին մարզումի պարտականութիւնս շուրջ երկու տարի մերժելով որեւէ նիւթական վարձատրութիւն: 1978-ին, Լիբանանի քաղաքա-

խումբ է իսկական մարդը եւ մանաւանդ գիտակից ու յանձնառու հայ մարդը:

Այս պարտականութիւնը կատարեցի, խումբ մը ազնիւ գիտակից ՅՄԸՄ-ական տիպար ֆուտբոլիստ եղբայրներու հետ, որոնք գիտակցութեան բարձր ոգիով, գոհաբերութեան վեհ զգացումով, կարգապահութեամբ, ճշդապահութեամբ, դրական գործակցութեամբ եւ լաւագոյնիս հասնելու ձգտումով արդարացուցին իրենցմէ սպասուածը եւ կարճ ժամանակամիջոցի մը ընթացքին յաջողեցանք բարելաւել կացութիւնը եւ արձանագրել գոհացուցիչ արդիւնքներ ի պատիւ բոլորին: Կ'ուզեմ կարեւորութեամբ յիշել այս եղբայրներուն անունները. - Կարպիս Թովմասեան (խմբապետ), Ծանօ Պէպեճեան, Յակոբ Պետիր-



2008, պարգևատրում, Հասիէ

եան, Կարօ Մելքոնեան, Վահէ Պաղճեան, Ռաֆֆի Ծառոյեան, Գեորգ Լէպլէպճեան, Ծորճիկ Սրուրեան, Չաւեն Էքմէճեան, Ծորճ Նասրի, Վահէ Պողալեան, Ծորճ Մորա, Յարութ Սոլաքեան, Գեորգ Մինասեան եւ Յարութ Դազարեան:

Լիբանան հաստատուելու ետք, միութենական մարզական եւ վար-

չական բեղուն գործունեութիւն ունեցայ: Առաջին մասնակցութիւնս եղաւ ՅՄԸՄ-ի ֆուտբոլի խումբին հետ, Վիեննայի գորաւոր կազմին դէմ: Այս խումբը նախքան Լիբանան իր ժամանումը, յաղթանակ մը արձանագրած էր Եգիպտոսի բանակի խումբին դէմ 3-0 արդիւնքով: Նոյնպէս Լիբանանի մէջ բազմաթիւ բացառիկ յաղթանակներ ձեռք բերած: Այս խումբին վերջին մրցումը տեղի ունեցաւ ՅՄԸՄ-ի կազմին դէմ, ուր ՅՄԸՄ (4-3) արդիւնքով, դժուար մրցումէ մը ետք փառաւոր յաղթանակ արձանագրեց:

1966-67 տարեշրջանի օտարերկրացիներու մրցումները չափազանց հետաքրքրական եղան, եւ վերջ գտան «Մագրա»ի խումբին յաղթանակով, վերջինս տիրացաւ օտարերկրացիներու տիրուածութեան տիտղոսին: ՅՄԸՄ-ի կազմը չափազանց յաջող ելոյթներ ունեցաւ, սակայն կետերու ջնջին տարբերութեամբ կորսնցուց օտարերկրացիները:

Ամրան ընթացքին, օտարերկրացիներու անարտէս երեք ամիս ետք, օտարերկրացիներու խումբը՝ «Մագրա» կազմակերպեց «Հապիպ Ապի Շահլար» բաժակի մրցաշարը, մասնակցութեամբ ութ խումբերու: Կիսաւարտականի մրցումին ՅՄԸՄ (3-1) արդիւնքով յաղթելէ ետք օտարերկրացիներու խումբին «Մագրա»ին, հասաւ անարտականի իր դէմ մրցակից ունենալով «Նըճմէ» խումբը, որ յաջողեցաւ յաղթել «Ռասիկ»ին: ՅՄԸՄ-ի խումբը անարտական մրցումին գեղեցիկ խաղ ցուցադրեց եւ յաջողեցաւ խաղի վերջին 10 վայրկեաններուն երկու գեղեցիկ կողմէն նշանակել, շնորհիւ եղբ. Ծորճիկին եւ արժանացաւ «Հապիպ Ապի Շահլար» մրցաշարի օտարերկրացիներու բաժակին:

1977-78 տարեշրջանի օտարերկրացիներու մրցաշարը կանգ առաւ երեք մրցումներէ ետք, երբ ՅՄԸՄ մերժեց դաշտ ներկայանալ, որովհետեւ ՅՄԸՄ-ի գորաւոր բողոքը՝ «Սաֆա» ակումբին կատարած օրինակազանցութեան դէմ (օտար երկու խաղացողներ միացնելուն պատճառով խումբին օտարերկրացիներու մրցումները սկսելէն ետք, ինչ որ հակապատկանագրային էր) անտեսուեցաւ եւ այս հարցով ֆետերասիոնէն ներս ծագած վեճերը պատճառ դարձան, որ մրցումները կանգ առնեն եւ ապա ֆետերասիոնի հրաժարելուն պատճառով օտարերկրացիներու խաղերը վերջ գտնեն եւ վերջնականապէս օտարերկրացիներու մրցաշարը ջնջուի, ու այսպէս 1967-68 տարեշրջանին Լիբանանի ֆուտբոլը օտարերկրացիներու ջնջումով:

1968-69 օտարերկրացիներու մրցումները կատարուեցան լարուած մթնոլորտի մէջ եւ պայքարը եղաւ չափազանց հետաքրքրական եւ սուր: Երեք խումբեր, ՅՄԸՄ, «Ռաս-

իկ» եւ ՅՄԸՄ հաւասար արդիւնքներով կը սուրային օտարերկրացիներու տիրուածութեան տիտղոսին: Հաւասարութեան պարագային կողերու տարբերութիւնը պիտի վճռէր օտարերկրացիներու խումբը: Այդպէս ալ եղաւ: Իւրաքանչիւր խումբ ուներ 30-ական կետ, ՅՄԸՄ կարիքը ուներ (4) կողեր նշանակելու, որպէսզի ապահովէ օտարերկրացիները: ՅՄԸՄ (3-0) արդիւնքով յաղթած էր «Մագրա»ին, խիստ կարիքը ուներ չորրորդին, սակայն դաշտի իրաւարարները նաեւ կը պայքարէին ՅՄԸՄ-ի խումբին դէմ, իրենց կողմնակալ եւ անարդար սուլիչներով: Յանկարծ ճորճիկ կը յաջողի նշանակել ՅՄԸՄ-ի վճռորոշ կող, սակայն, ափսոս կողմի իրաւարարին դրոշակը կը միջամտէ եւ արագօրէն չեղեալ կը նկատէ ՅՄԸՄ-ին նշանակած արդար կողը: ՅՄԸՄ-ի տղաքը ինքնավստահ կը շարունակէ իրենց կազմակերպութեամբ յարձակումները եւ գրոհները, եղբ. Լեւոնին՝ խմբապետին, գեղեցիկ մէկ փոխանցումին վրայ ճորճիկ դարձեալ կը յաջողի քառակուսին դուրս



2003, Լուս Անճըլոս, պարգևատրումի նկար ՅՄԸՄ-ի Կեդրոնական Վարչութեան հետ

գորաւոր հարուածով ցնցել հակառակորդին բերողը: ՅՄԸՄ կ'ապահովէ մրցումին յաղթանակը (4-0) արդիւնքով, ՅՄԸՄ-ականներու՝ խաղացողներու եւ համակիրներու, խանդավառութիւնը սահման չունէր, արժանի էին յաղթանակին:

Այսպէս ՅՄԸՄ երկար եւ դժուար պայքարելէ ետք կը յաջողի արդարօրէն եւ արժանաւայել ընթացքով տիրանալ 1968-1969-ի օտարերկրացիներու տիտղոսին:

Հոս կը թուեմ կարծի մը կարելի իրագործումներ, որոնք տեղի ունեցան այդ շրջանին:

1.- 1968-69 տարեշրջանի օտարերկրացիներու մրցումներու շարքին, կարելի իրագործում մըն էր ՅՄԸՄ-ի սթիքլալ դարձի մրցումը: Արդ՝ երթի մրցումին (1-0) արդիւնքով յաղթանակ մը արձանագրելէ ետք նոյն խումբին դէմ, շնորհիւ մրցումին վերջին վայրկեաններուն եղբ. Մայքլին նշանակած կողին, ՅՄԸՄ յաջողեցաւ փառաւոր յաղթանակ մը արձանագրել դարձի մրցումին, եւ (4-0) արդիւնքով անարտէս մրցումը, շնորհիւ եղբ. Ծորճիկին նշանակած այս (4) կողերուն, անմոռանալի եւ յիշատակելի մրցում մը եղաւ յատկապէս ինծի համար:

2.- ՅՄԸՄ-ՅՄԸՄ Ապրիլ 24-ին առիթով բարեկամական մրցումը վերջ գտաւ ՅՄԸՄ-ի յաղթանակով (3-1), կողերը նշանակեցին եղբայրներ՝ Ծորճիկ, Լեւոն եւ Ռադէպ:

3.- ՅՄԸՄ 66-67-ի օտարերկրացիներու մրցումին, որ տեղի ունեցաւ